



**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ ԽՈՐՀՐԴԻ
19.04.2008թ. թիվ 16 ՈՐՈՇՄԱՄԲ (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 022)
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԽՈՐՀՐԴԻ 03.09.2021թ. թիվ 55 ՈՐՈՇՄԱՄԲ**

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ	2
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ	2
3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՈՒՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ	3
4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	7
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ	7
6. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)	8
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ	8
ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ	8
9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	10
10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	14
11. ՍՈՒԲՐՈԳԱՅԻԱ	16
12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ	16

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Շինմոնտաժային աշխատանքների կամավոր ապահովագրության սույն կանոնները (այսուհետև՝ Կանոններ) մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2. Կանոնների համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը (այսուհետև՝ Ապահովագրող), գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, գործունակ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ (այսուհետև՝ Ապահովադիրներ) կնքում է շինմոնտաժային աշխատանքների կամավոր ապահովագրության պայմանագրեր (այսուհետև՝ Ապահովագրության պայմանագիր):

1.3. Շինմոնտաժային աշխատանքների կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրության», «Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն» և «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասերի մեջ:

1.4. Կանոնները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չեն հակասում Կանոններին, օրենքին և այլ իրավական ակտերին:

1.5. Ապահովադիրն իրավունք ունի Ապահովագրության պայմանագիր կնքել ինչպես իր օգտին, այնպես էլ իր օգուտ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի (այսուհետև՝ Շահառու)՝ Ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու համար, ինչպես նաև իրավունք ունի մինչև ապահովագրական պատահարը տեղի ունենալը, իր հայեցողությամբ, փոխարինելու նրանց:

1.6. Ապահովադիր կամ Շահառուի մոտ ապահովագրված գույքի պահպանման նկատմամբ շահագրգռվածության բացակայության պարագայում կնքված Ապահովագրության պայմանագիրը, կնքման պահից, ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով համարվում է առչինչ:

1.7. Ապահովադիրն վերաբերող Կանոնների բոլոր դրույթները, հավասարապես տարածվում են նաև Շահառուի վրա, եթե դա չի հակասում գործող օրենսդրությանը:

1.8. Կանոնների համաձայն՝

1.6.1. Ապահովագրված գույքին պատճառված վնասների հետևանքով Ապահովագրողի կողմից հատուցվող վնասներ ասելով պետք է հասկանալ իրական վնասը, այսինքն, ապահովագրված գույքի կործանումը, կորուստը կամ վնասը, ինչպես նաև այն ծախսերը, որոնք Ապահովադիրը կրել է կամ պետք է կրի ապահովագրական պատահարի հետևանքների վերացման համար:

1.6.2. Ապահովադիր ներկայացուցիչներ ասելով պետք է հասկանալ Կանոնների 2.1.1, 2.1.2 կետերի համաձայն ապահովագրության օբյեկտ հանդիսացող շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող բոլոր կազմակերպություններին և դրանց աշխատակիցներին, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

1.6.3. Մեկ ապահովագրական դեպքով Ապահովագրողի պատասխանատվության սահման ասելով պետք է հասկանալ վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափը՝ ապահովագրված գույքի առանձին խմբերին, ապահովագրական ռիսկերին, մեկ ապահովագրական դեպքով (պատահարով) ապահովագրված ծախսերին:

1.6.4. Ոչ պայմանական չհատուցվող գումար (այսուհետև՝ ոչ պայմանական ֆրանչիզա) ասելով պետք է հասկանալ ապահովագրության օբյեկտին պատճառված վնասի այն մասը, որը Ապահովագրողի կողմից ենթակա չէ հատուցման:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ

2.1. Համաձայն Կանոնների և №1,2 Լրացուցիչ պայմանների, ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Ապահովադիր կամ շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար պատասխանատու այլ անձի ՀՀ օրենսդրությանը չհակասող այն գույքային շահերը, որոնք կապված են.

- շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելու միջոց և/կամ օբյեկտ հանդիսացող և շինհրապարակում կամ նրան անմիջապես մոտ գտնվող գույքի տիրապետման, տնօրինման կամ օգտագործման հետ,

- Ապահովադիր կամ շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար պատասխանատու այլ անձի պարտականությունը՝ հատուցելու շինմոնտաժային աշխատանքների կամ ետթողարկման երաշխիքային պարտականությունների կատարման ընթացքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասների ,

- Ապահովադիր մոտ լրացուցիչ ծախսերի առաջացման հետ՝ պայմանավորված իր կողմից կառուցված շենքին (շինությանը) կամ տեղադրված սարքավորումներին հասցված վնասի հատուցման պարտականության հետ, որոնք հետևանք են շինմոնտաժային և թողարկման կարգավորման աշխատանքների ընթացքում թույլ տրված բացթողումների, բայց որոնք ի հայտ են եկել ետթողարկման երաշխիքային պարտավորությունների ընթացքում:

Կանոնների համաձայն ապահովագրության ենթակա են.

2.1.1. Շինարարական աշխատանքները, ներառյալ շինարարական նյութերը և կոնստրուկցիաները, աշխատավարձի վճարման ծախսերը, փոխադրման ծախսերը, մաքսավճարները և հարկերը,

2.1.2. Մոնտաժային աշխատանքները, ներառյալ մոնտաժող սարքավորումները, նյութերը, աշխատավարձի վճարման ծախսերը, փոխադրման ծախսերը, մաքսավճարները և հարկերը,

- 2.1.3. Շինհրապարակի սարքավորումները (ժամանակավոր շենքերը և շինությունները, պահեստային տարածքները, շինարարական անտառները և այլն),
- 2.1.4. Շինարարական մեքենաները և սարքավորումները՝ հողափոր տեխնիկա (բուլդոզերներ, էքսկավատորներ և այլն), ճանապարհաշինարարական տեխնիկան (ասֆալտ հարթեցնող մեքենաներ և այլն), շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար շինարարական տեխնիկան և սարքավորումներ՝ կցված շինարարության օբյեկտին (վերամբարձ կռունկներ, ամբարձիչներ, բետոնախառնիչներ և այլն), շինարարական տեխնիկայի այլ տեսակներ,
- 2.1.5. Շինհրապարակում կամ նրան անմիջապես մոտ գտնվող օբյեկտները (բացառությամբ Կանոնների 2.1.3, 2.1.4 կետերով նախատեսված օբյեկտների), որոնք պատկանում են Պատվիրատուին կամ Մատակարարին՝ մատակարարման պայմանագրով, որի օբյեկտ է հանդիսանում Կանոնների 2.1.1, 2.1.2 կետերում թվարկված աշխատանքները,
- 2.1.6. Ապահովագրական պատահարի հետևանքով վնասված գույքի կտորներից (մնացորդներից) ապահովագրության տարածքի մաքրման ծախսերը:
- 2.2. Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ ապահովագրության ենթակա են՝
- 2.2.1. Երրորդ անձանց նկատմամբ քաղաքացիական պատասխանատվությունը: Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության լրացուցիչ պայմանները սահմանված են Կանոններին կից Հավելված 1-ում,
- 2.2.2. Թողարկումից հետո երաշխիքային պարտավորություններ: Թողարկումից հետո երաշխիքային պարտավորությունների ապահովագրության լրացուցիչ պայմանները սահմանված են Կանոններին կից Հավելված 2-ում:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

- 3.1. Ապահովագրական ռիսկ է համարվում պատահարի տեղի ունենալու հավանականությունը, որի հետ կապված իրականացվում է ապահովագրություն:
- 3.2. Ապահովագրական պատահար է համարվում Ապահովագրության պայմանագրով նախատեսված և տեղի ունեցած իրադարձությունը, որի հետ կապված ի հայտ է գալիս Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Շահառուին), երրորդ անձանց ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը:
- 3.3. Կանոնների համաձայն Ապահովագրողը հատուցում է Ապահովադրին «բոլոր ռիսկերի համար պատասխանատվությամբ» վնասները (իրական վնասը), որոնք առաջացել են որևէ չկանխատեսվող կամ հանկարծակի նյութական ազդեցության հետևանքով ապահովագրության օբյեկտի կործանման կամ վնասման արդյունքում՝ բացառությամբ Կանոնների 3.4, 3.5 կետերով նախատեսված դեպքերի, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- Չկանխատեսվող և հանկարծակի են հանդիսանում այնպիսի նյութական ազդեցությունները, որոնք Ապահովադիրը կամ նրա ներկայացուցիչները կամ չեն կարողացել ժամանակին կանխատեսել կամ մասնագիտական գիտելիքների հիման վրա չէին կարող կանխատեսել և որոնք էլ հանդիսանում են սովորական պրակտիկա շինարարական ոլորտում:
- 3.3.1. Ապահովագրություն կարող է իրականացվել մասնավորապես հետևյալ ռիսկերից.
- 3.3.1.1. հրդեհի, պայթյունի, կայծակի հարվածի, թռչող սարքերի ընկնումից,
- 3.3.1.2. տարերային աղետների (փոթորիկի, կարկուտի, երկրաշարժի, ձյան զանգվածակույտների սողանք, ջրհեղեղի, փլուզումների),
- 3.3.1.3. գետնի մտվածքի,
- 3.3.1.4. գրունտային ջրերով ողողման,
- 3.3.1.5. ապահովագրված գույքի վնասմանն ուղղված երրորդ անձանց կանխամտածված գործողությունների, կտորանքի միջոցով գողության, կողոպուտի, ավազակության,
- 3.3.1.6. ինժեներական ցանցի վթարի (ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու),
- 3.3.1.7. մոնտաժման սխալների,
- 3.3.1.8. օբյեկտի փլուզման կամ վնասման, այդ թվում փլուզվող կամ ընկնող մասերի,
- 3.3.1.9 շինհրապարակում տեղի ունեցած որևէ այլ հանկարծակի և չկանխատեսված իրադարձությունների, որոնք Կանոններով կամ Ապահովագրության պայմանագրով բացառված չեն:
- 3.3.2. Հրդեհի ասելով հասկացվում է այրում բաց կրակի կամ թույլ վառվող կրակի տեսքով, որն առաջացել է դրա համար հատուկ չնախատեսված տարածքներում կամ տարածվել է այդ չնախատեսված տարածքներից դուրս և ընդունակ է ինքնուրույն տարածվել հետագայում:
- Հրդեհի կողմից պատճառած վնաս ասելով հասկացվում է ապահովագրված գույքին պատճառված վնասը, որն առաջացել է կրակի անմիջական ազդեցությունից, բարձր ջերմաստիճանից, հրդեհի հետևանքներից (ծուխ, մուր և այլն), ինչպես նաև հրդեհը հանգցնելու միջոցառումների իրականացման ժամանակ ապահովագրված գույքին հասցված վնասի արդյունքում:
- Հրդեհից ապահովագրության դեպքում Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն՝
- ա) ապահովագրված գույքին կրակի կամ բարձր ջերմաստիճանի հասցրած վնասը, որն առաջացել է մշակման կամ վերամշակման կամ այլ նպատակով նրա վրա կրակի կամ տաքության ազդեցությամբ, այդ թվում այն գույքին պատճառված վնասը, որի միջոցով կամ որի մեջ ստեղծվում են կրակը կամ տաքությունը կամ, որը հատուկ նախատեսված է դրա ծագման, պահպանման, տարածման կամ փոխանցման համար:
- բ) ապահովագրված գույքին հասցված վնասը, որը առաջացել է բուխարուց կամ վառարանից և այլն, դուրս ընկած կամ վառվող ածուխների խանձման կամ վառման հետևանքով, կապված իր համար հատուկ նախատեսված տարածքից կրակի հանկարծակի դուրս գալու հետ, բացի հրդեհի առաջացման դեպքից:

զ) էլեկտրական սարքավորումներին հասցված վնասը, որն առաջացել է էլեկտրական հոսանքի (ներառյալ կարճ միացումը, հոսանքի ուժի կամ լարման բարձրացումը) հետ կապված, ուղեկցվել է կայծերով կամ տաքությամբ, բացառությամբ բաց կրակի ծագման դեպքերից, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Համաձայն Կանոնների էլեկտրական սարքավորումներ ասելով հասկացվում է ցանկացած օբյեկտ, որում իրականացվում է էլեկտրաէներգիայի արտադրություն, բաշխում, փոխանակում կամ սպառում (այդ թվում՝ էլեկտրական մարտիներ և լարեր):

3.3.3. Պայթյուն ասելով հասկացվում է սահմանափակ ծավալով, կարճ ժամանակահատվածում, մեծ քանակությամբ էներգիայի անջատման սրընթաց պրոցես, որն առաջացել է գազի կամ գոլորշու ընդլայնման ճգնման հետևանքով:

Համաձայն Կանոնների ապահովագրված են համարվում կենցաղային կամ արդյունաբերական նպատակների համար օգտագործվող գազի պայթյունը, գոլորշու կաթսաների պայթյունը, գազապահեստարանների, գազամուղ խողովակների, ճնշման տակ աշխատող անոթների կամ այլ մնանատիպ սարքավորումների, ինչպես նաև պայթուցիկ նյութերի պայթյունը:

Ռեզերվուարի (կաթսա, խողովակ և այլն) պայթյուն է համարվում միայն այնպիսի պայթյունը, երբ ռեզերվուարի պատերը մասնատվում են այնպես, որ ռեզերվուարի դրսի և ներսի ճնշումը վարկյանաբար հավասարվում է:

Եթե պայթյունը տեղի է ունենում անոթի ներսում քիմիական փոխակերպումների հետևանքով, ապա անոթին հասցված վնասը հատուցվում է նույնիսկ այն դեպքում, երբ անոթի պատերը չեն մասնատվել կտորների:

Ապահովագրված չի համարվում և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ վնասը, որը հասցվել է՝

ա) Ապահովագրողի, նրա ներկայացուցիչների կամ երրորդ անձանց կողմից թույլատրված գործունեության սահմաններում կատարված պայթյունի հետևանքով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

բ) մեքենայական սարքավորումների ներքին այրման խցի ներսում կատարված պայթյունի հետևանքով.

գ) էլեկտրական կամուտացիոն սարքավորումներին՝ դրանց ներսում գազի ճնշման ուժով.

դ) արտադրական պրոցեսի սովորական բաղադրիչ մաս կազմող պայթյունների հետևանքով.

ե) անոթի ներսում ճնշման նվազման հետևանքով (իմպլոզիա).

զ) հենց ռեզերվուարի պայթյունից, որն առաջացել է մաշվածությունից, ավելորդ (չափազանց) ժանգոտումից, նստվածքներից կամ պատերին առաջացող այլ նստվածքներից:

է) պայթյունի հետևանքով, եթե տվյալ իրադարձության փաստով համապատասխան քննչական օրգանների կողմից որոշում չի կայացվել քրեական գործի հարուցման մասին, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3.3.4. Կայծակի հարված ասելով հասկացվում է ապահովագրված գույքի վրա մթնոլորտային էլեկտրական լիցքի ուղղակի ընկնումը:

Կայծակի հարվածի առաջացրած վնաս ասելով հասկանում ենք այն վնասը, որը հասցվել է ապահովագրված գույքի վրա կայծակի անմիջականորեն ջերմային կամ էլեկտրադինամիկ ազդեցությունից:

Ապահովագրողի կողմից ապահովագրված չեն համարվում և հատուցման ենթակա չեն.

ա) էլեկտրական սարքերին հասցված վնասները, որոնք հետևանք են՝

- էլեկտրաէներգիայի ազդեցության կամ լրացուցիչ բեռնվածքի կամ մթնոլորտային պայմանների ուժի արդյունքում ջերմային ներգործության, այնպիսիք, ինչպիսիք են ստատիկ էլեկտրականությունը, մթնոլորտային լիցքաթափման և այլ համանման երևույթների արդյունքում ինդուկցիան,

- էլեկտրաէներգիայի (էլեկտրամագնիսական իմպուլսի) փոխանցման հետևանքով էլեկտրալարերի կայծակնահարությանը,

բ) ցանկացած տեսակի պաշտպանող կանխարգելիչների, պաշտպանող անջատիչների, ամպրոպային պարպիչների, շանթարգելների կամ այլ մնանատիպ սարքավորումների՝ դրանց ընթացիկ օգտագործման ժամանակ:

3.3.5. Երկրաշարժ ասելով հասկացվում է ստորգետնյա ցնցումներ և տատանումներ, որոնք պայմանավորված են բնական պատճառներով: Երկրաշարժի հասցրած վնասները ապահովագրությամբ ծածկվում են, եթե երկրաշարժը գրանցված է ապահովագրության տարածքում իրավասու սեյսմոգրաֆիկ ծառայությունների կողմից և երկրաշարժի ուժգնությունը Ռիխտերի սանդղակով կազմել է 5 (հինգ) բալ և ավելի: Երկրաշարժի հասցրած վնասները ենթակա են հատուցման միայն այն դեպքում, եթե Ապահովագրողն ապացուցի, որ ապահովագրված շենքերի նախագծման, կառուցման և օգտագործման ժամանակ անհրաժեշտ կարգով հաշվի են առնվել տեղանքի սեյսմոլոգիական պայմանները, որտեղ տեղակայված են տվյալ շենքերը և շինությունները:

3.3.6. Փոթորիկ ասելով հասկացվում է 17,2 մ/վ (Բոֆորտի սանդղակով 8 բալ և ավելի ուժգնությամբ) միջինից բարձր արագությամբ քամի՝ հարթ տարածքում և 25 մ/վ արագությամբ քամի՝ նախալեռնային և լեռնային տարածքներում: Քամու արագությունը պետք է հավաստվի բնապահպանական վիճակի նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմինների կողմից տրված տեղեկանքով: Եթե այդպիսի տեղեկանք չի կարող տրվել Ապահովագրողից անկախ պատճառներով, ապա համարվում է, որ քամին եղել է բավարար արագությամբ, եթե Ապահովագրողն ապացուցի ստորև նշված պայմաններից գոնե մեկի առկայությունը՝

ա) ապահովագրության տարածքում կամ դրա շրջակայքում օդային մասսաների շարժը պատճառ է հանդիսացել լավ վիճակում գտնվող շենքի կամ այլ գույքի, որը կարող է շենքին համանման դիմանալ քամու համապատասխան ուժգնությամբ, կործանման կամ վնասման պատճառ:

բ) լավ վիճակում գտնվող ապահովագրված գույքի կործանումը կամ վնասումը կարող էր տեղի ունենալ միայն փոթորիկի ազդեցությամբ:

72 ժամ անընդմեջ կամ ընդհատումներով տևած փոթորիկի հասցրած վնասները դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահար:

3.3.7 Կարկուտ ասելով հասկացվում է սառցե կտորների տեսքով մթնոլորտային տեղումներ (կարկտահատ): Կարկուտի հասցրած վնաս ասելով հասկացվում է ապահովագրված գույքին հասցված վնաս, որն առաջացել է սառցե կտորների անմիջական մեխանիկական ազդեցությամբ: 24 ժամ անընդմեջ կամ ընդհատումներով տևած կարկուտի հասցրած վնասները դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահար

Ապահովագրական պատահար չի համարվում և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ հասցված վնասը՝

ա) շարժական գույքին, որը գտնվում է շենքից դուրս, բացի այն գույքից, որը ամրացված է շենքին արտաքին կողմից, (օրինակ՝ ցուցափեղկեր, լյուսինեսցենտային սարքավորումներ, շերտավարագույրներ և ալեհավաքային սարքավորումներ):

3.3.8. Չյան մեծ զանգվածակույտ ասելով հասկացվում է ձյան կամ սառույցի շարժվող զանգված, որը սահելով իջնում է լեռնալանջից: Չյան և սառցե զանգվածների մեխանիկական ազդեցության հետ միասին ձյան մեծ զանգվածակույտից ապահովագրությունը ծածկում է նաև ձյան մեծ զանգվածակույտն ուղեկցող օդի ճնշման հասցրած վնասը:

3.3.9. Ջրհեղեղ ասելով հասկացվում է ապահովագրության տարածքի հանկարծակի ջրով ծածկվելը (ջրի տակ անցնելը), որը հետևանք է գետի, լճի, ծովի կամ այլ բնական կամ արհեստական ջրամբարների ջրի մակարդակի բարձրացման, պատճենչների ճեղքվածքների, սահմանագատող ամբարտակների, ցունամիների, ինչպես նաև հորդառատ անձրևների:

Համաձայն Կանոնների ապահովագրական պատահար չեն համարվում խորտակումը՝

ա) որը պայմանավորված է քամիներով՝ առաջացնելով ծովից ալիքների տարածում և ջրի մակարդակի բարձրացում՝ գետի բերած ջուրը գետաբերանում մնալու պատճառով (փոթորկային մակընթացություն),

բ) վերերկրյա ջրամբարներից ջրի դուրս գալու հետևանքով, որը կարելի էր կանխատեսել ելնելով տեղական պայմաններից (տեղանքի ռելիեֆը, կլիման, ջրի սեզոնային տատանումները և այլն), որոնք հատկանշական են ապահովագրության տարածքի համար:

Համարվում է որ ջրի ափերից դուրս գալը հնարավոր էր կանխատեսել, եթե վերջին երեսուն տարիներին այդպիսի իրադարձությունները տեղի են ունենում տասը տարիների կտրվածքով միջինում առավել հաճախ, քան մեկ անգամ (Ապահովագրության պայմանագրի գործողության սկզբի ամսաթվի դրությամբ):

Ջրհեղեղներից ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա չեն վնասները, որոնք առաջացել են՝

ա) խոնավության հետևանքով առաջացած բորբոսի (փտման, սնկերի) հետևանքով.

բ) հիմնային ջրերի պատճառով.

գ) կոյուղային ջրերի արտահոսքի հետևանքով, եթե իհարկե դա ջրհեղեղի հետևանք չէ:

3.3.10. Սողանք (փլուզում) ասելով հասկացվում է բնահողի բնական սահքը, քարերի և հողակույտերի վայր ընկնելը՝ ներառյալ քարաթափը և ցեխաջուրը: Սողանքից (փլուզումից) ապահովագրությունը չի ծածկում բնահողը վերականգնելու ծախսերը:

Ապահովագրական ծածկույթը չի տարածվում սողանքից (փլուզումից) առաջացող այն վնասների վրա, որոնք առաջացել են՝ բնահողի մերձափնյա կամ գետային քայքայումից (էրոզիայից), նոր կառույցների նորմալ նստեցումից, պայթեցման աշխատանքներ կատարելիս

3.3.11. Գետնի նստվածք ասելով հասկացվում է գետնի բնական իջեցում բնական խոռոչների վրա (լեռնախոռոչների, ճեղքվածքների): Ապահովագրական պատահար չի համարվում և չի հատուցվում մինչև Ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբը տեղի ունեցած գետնի նստվածքների հետևանքով առաջացած վնասների վրա: Ապահովագրական ծածկույթը չի տարածվում հետևյալ պատճառներով առաջացած գետնի նստվածքի հետևանքով վնասների վրա՝ բնահողի առեցման և հալման հետևանքով, բնահողի դիմամիկ ներգործության (վիբրացիայի) հետևանքով, բնահողի գերչորացման, դրենաժի (ցամաքեցման) հետևանքով, բնահողի մերձափնյա և գետային քայքայման (էրոզիայի) հետևանքով, նոր կառույցների նորմալ նստեցման հետևանքով, հիմքային ջրերի ազդեցության հետևանքով:

3.3.12. Գրունտային ջրերով ողողվել ասելով հասկացվում է գրունտային ջրերի մակարդակի բարձրացումը, պայմանավորված նախկինում անջուր գրունտների ողողմամբ՝ ջրի՝ ջրատարների ափերով և հատակով, գետերով ֆիլտրացիայով, գետերի հունի փոփոխմամբ, ջրատար և կոյուղու համակարգերից ջրի կորուստով և այլն:

Գրունտային ջրերով ողողման հետևանքով հասցրած վնաս ասելով հասկացվում է ապահովագրված գույքին կան դրա մասին հասցված վնաս, որը պայմանավորված է բարձրացած գրունտային ջրերի անմիջական ազդեցությամբ:

Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ մինչև Ապահովագրության պայմանագրի գործողության մեջ մտնելը առաջացած գրունտային ջրերի մակարդակի բարձրացումը:

3.3.13. Ապահովագրված գույքի վնասմանը ուղղված երրորդ անձանց անօրինական գործողություններ ասելով հասկացվում է երրորդ անձանց կանխատեսված գործողություններ, ուղղված ապահովագրված գույքի վնասմանը կամ ոչնչացմանը և որոնք օրենսդրության համաձայն կարող են դասակարգվել, որպես՝

- Գույքի կանխատեսված ոչնչացում կամ վնասում.

- Ավագակություն.

- Բարբարոսություն:

Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրական պատահար չի համարվում ապահովագրված գույքի ոչնչացումն ու վնասումը, որը հետևանք է հանդիսանում այն գործողությունների, որոնք իրավասու պետական մարմինների կողմից դասակարգված են վերը թվարկվածներից այլ կերպ:

3.3.14 «Կտրանքի միջոցով կողոպուտ» ռիսկի համար ապահովագրությունը տարածվում է միայն ապահովագրության տարածքում տեղակայված շինությունների և պահեստարանների ներսում գտնվող գույքի վրա:

3.1.14.1. Կտրանքի միջոցով կողոպուտ ասելով հասկացվում է ուրիշին պատկանող գույքի հափշտակում շինությունից կամ պահեստարանից՝ կտրանքի միջոցով: Կտրանքի միջոցով կողոպուտը համարվում է տեղի ունեցած միայն այն դեպքում, եթե տվյալ իրադարձության փաստով քննչական մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով կայացվել է հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին որոշում:

3.3.14.2. Կանոնների համաձայն պահեստարաններ ասելով հասկացվում է փակ շինություն, որը հատկացվել է նյութական արժեքների մշտական կամ ժամանակավոր պահպանման համար (օրինակ՝ շինարարական կոնտեյներներ), որոնք ապահովված են հատուկ տեխնիկական (էլեկտրոնային կամ մեխանիկական) անվտանգության միջոցներով, օրինակ հակառևանգիչ համակարգով, էլեկտրոնային փականներով: Պահեստարաններ չեն համարվում տարածքի ցանկապատված հատվածները:

3.3.14.3. Կանոնների համաձայն պահեստարաններ ասելով հասկացվում է շենքեր, շենքի մասեր կամ շինություններ, նախատեսված մարդկանց ժամանակավոր այնտեղ գտնվելու կամ արտադրական կամ այլ ծառայողական նպատակներով նյութական արժեքներ պահպանելու համար, պայմանով, որ դրանք ապահովված են հատուկ

տեխնիկական անվտանգության միջոցներով (էլեկտրոնային կամ մեխանիկական) օրինակ հակաառևանգիչ համակարգով, էլեկտրոնային փականներով:

3.3.15. «Կողոպուտ կամ Ավագակություն» ռիսկի համար ապահովագրությունը տարածվում է միայն ապահովագրության տարածքում տեղակայված շինությունների և պահեստարանների ներսում գտնվող գույքի վրա, ինչպես նաև ապահովագրության տարածքում տեղակայված հսկվող ցանկապատված տարածքներում, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3.3.15.1. Կողոպուտ կամ Ավագակություն ասելով հասկացվում է հարձակում ուրիշի գույքը հափշտակելու նպատակով, որն իրականացվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր ուժի կիրառմամբ կամ այդպիսի ուժի կիրառման սպառնալիքով:

3.3.15.2. Կողոպուտը կամ Ավագակությունը համարվում է տեղի ունեցած, եթե՝

ա) Ապահովագրի կամ իր ներկայացուցիչների նկատմամբ նրանց դիմադրությունը կոտրելու և ապահովագրված գույքը բռնագրավելու նպատակով կիրառվում է բռնություն.

բ) Ապահովագրի կամ նրա ներկայացուցիչները իրենց կյանքին կամ առողջությանը վնաս սպառնալու վտանգի տակ, որը կարող է իրականացվել տեղում, փոխանցում են կամ թույլ են տալիս փոխանցել գույքը ապահովագրության տարածքի շրջանակներում կամ ապահովագրության տարածքին հարող ցանկապատված տարածքի սահմաններում: Կանոնների սույն կետի շրջանակներում Ապահովագրի աշխատողներին են վերաբերում նաև շենքի, ներքին տարածությունների և ապահովագրված տարածքում գտնվող գույքի պահպանության համար անձինք՝ վարձված Ապահովագրողի կողմից:

3.3.15.3. Կողոպուտը կամ Ավագակությունը համարվում է տեղի ունեցած միայն այն դեպքում, եթե տվյալ իրադարձության փաստի առիթով քննչական մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով կայացվել է հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին որոշում:

3.3.16. Մոնտաժման սխալներ ասելով հասկացվում է չկանխամտածված գործողություններ, որոնք տեղի են ունեցել շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելիս, այն աճանց կողմից, որոնք պատասխանատու չեն այն աշխատանքների կատարման համար, որոնք հանգեցրել են ապահովագրված գույքի վնասմամբ/կործանմանը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3.3.17. Ինժեներական համակարգերի (ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման) վթար ասելով հասկացվում է վնասներ, որոնք արդյունք են ապահովագրված գույքին այն ջրերի անմիջական ներգործության հետևանքով հասցված վնասների, որոնք անսպասելի և հանակարծակի դուրս են եկել ջրամատակարարման, կոյուղու կամ ջեռուցման համակարգերից, դրանց հետ ստացիոնար կերպով կապակցված սարքից կամ սարքավորումից, ինչպիսին է ծորակը, կափույրը, բաքը, վաննան, ռադիատորը, ջեռուցիչ կաթսան և այլն: Ապահովագրական պատահարներ չեն համարվում և հատուցման ենթակա չեն այն վնասները որոնք առաջացել են կոյուղուց ցանկացած պատճառով ջրի դուրս գալու հետ, որը տարբերվում է կոյուղու խողովակի պայթյունից, կապերից, միացումներից, հրդեհի հանգցման ցայտաջրմուղային համակարգերի կամ ջրաքաշ խողովակներից ջրի դուրս գալուց, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3.3.18. Ապահովագրողը ապահովագրական պատահարից հետո տարածքի մաքրման ծախսերը հատուցում է միայն այն դեպքում, եթե դա նախատեսված է Ապահովագրության պայմանագրով և պայմանագրով նախատեսված սահմանաչափերով:

Մաքրման ծախսեր են համարվում այն ծախսերը, որոնք պետք է իրականացվեն ապահովագրական պատահար տեղի ունենալուց հետո՝ շինհրապարակի տարածքը վերականգնողական աշխատանքների համար պիտանի վիճակի բերելու համար:

3.3.19. Տեղի ունեցած իրադարձության փաստով քրեական գործ հարուցելու պահանջը (համաձայն Կանոնների 3.3.13, 3.3.14.1 և 3.3.15.3 կետերի) պարտադիր չէ միայն այն դեպքում, եթե քննչական մարմինները հրաժարվել են քրեական գործ հարուցելուց՝ ՀՀ Քրեական Օրենսգրքին համապատասխան:

3.4. Հատուցման ենթակա չէ այն վնասը, որը հետևանք է.

3.4.1. Ցանկացած ռազմական գործողությունների և նրանց հետևանքների, քաղաքացիական պատերազմների, ժողովրդական հուզումների, գործադուլների, աշխատանքի ընդհատումների, առգրավումներից, քաղաքացիական կամ զինվորական իշխանությունների կամ ցանկացած քաղաքական կազմակերպության հրամանով գույքի ձեռքբերումների, ոչնչացման կամ վնասման, հարկադրաբար ազգայնացման, արտակարգ կամ հատուկ դրության կիրառելու, ընդվզումների, լրկաուտների, պետական հեղաշրջման, դավադրության, ապստամբությունների, հեղափոխության, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

3.4.2. տարերային աղետների, երբ մինչև Ապահովագրության պայմանագրի կնքումը ապահովագրական ծածկույթը ընդգրկող տարածքը հայտարարվել է որպես տարերային աղետի գոտի.

3.4.3. Ցակացած տիպի ռադիոակտիվ էներգիայի ազդեցության.

3.4.4. Ապահովագրի, նրա աշխատակիցների կամ ներկայացուցիչների միտումնավոր գործողությունների.

3.4.5. Աշխատանքների լրիվ կամ մասնակի դադարեցման ընթացքում ապահովագրված գույքի վնասումը կամ կործանումը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

3.4.5.1. «Աշխատանքների լրիվ դադարեցման ժամանակաշրջան» ասելով հասկացվում է շինմոնտաժային աշխատանքների դադարեցումը անհայտ ժամանակով և անավարտ շինարարական օբյեկտների կոնսերվացիան:

3.4.5.2. «Աշխատանքների մասնակի դադարեցման ժամանակաշրջան» ասելով հասկացվում է շինմոնտաժային աշխատանքների ժամանակավոր (մինչև 3 ամիս) դադարեցումը, հաստատված Գլխավոր պատվիրատուի համապատասխան ներքին փաստաթղթերով, որը հետևանք է ֆինանսավորման դադարեցման, կամ վերապլանավորման կամ շինարարության մասնակիցներից որևէ մեկի շինարարական գործունեություն իրականացնելու լիցենզիան ետ կանչելու կամ դադարեցնելու հետ:

«Աշխատանքների մասնակի դադարեցման ժամանակաշրջանին» չեն վերաբերվում հանգստյան և տոնական օրերը:

3.4.5.3. Աշխատանքների դադարեցման օր է համարվում «Աշխատանքների դադարեցման մասին ակտ»-ի ստորագրման օրը: Աշխատանքների դադարեցման մասին Ապահովագրի պարտավոր է գրավոր տեղեկացնել Ապահովագրողին Ակտի ստորագրման հաջորդ աշխատանքային օրը:

- 3.4.6. Ապահովադրի, նրա ներկայացուցիչների կամ շինմոնտաժային աշխատանքների համար պատասխանատու անձանց կողմից ապահովագրված օբյեկտի պահպանման, շահագործման, սպասարկման կանոնների չպահպանումը (այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակ օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների պահպանման, շահագործման, սպասարկման կանոնների չկատարումը), ինչպես նաև նյութերի օգտագործումը այլ դրանց համար նախատեսված նպատակները տարբեր այլ նպատակների համար:
- 3.4.7. Ապահովադրի, նրա ներկայացուցիչների կամ շինմոնտաժային աշխատանքների իրականացնող այլ կազմակերպության կողմից շինարարական նորմերի և կանոնների, ինչպես նաև ապահովագրված օբյեկտների վրա աշխատանքներ իրականացնելիս տեխնիկական անվտանգության կանոնների չկատարումը:
- 3.4.8. Մխալներ, որոնք թույլ են տրվել շինարարական օբյեկտի նախագծման ժամանակ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 3.4.9. Դեֆեկտավոր նյութերի և կոնստրուկցիաների օգտագործումը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Բայց եթե դեֆեկտավոր նյութերի օգտագործման ժամանակ տուժել են ապահովագրված գույքի սարքին վիճակում գտնվող մասերը, ապա դրանց վերականգնման համար ծախսերը ենթակա են հատուցման:
- 3.4.10. Փորձարարական կամ հետազոտական աշխատանքների, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 3.4.11. Վնասի, որն անմիջապես հետևանք է շահագործման գործոնների մշտական ազդեցության (մաշվածության, կոռոզիայի, թթվելու, փտման, ինքնաբռնկման):
- 3.4.12. Ապահովադրի, նրա ներկայացուցիչների կամ Ապահովագրության պայմանագրում նշված շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող այլ անձանց կողմից լիցենզիայի չըջանակներում թույլատրված գործողություններից բացի այլ գործողությունների իրականացման:
- 3.4.13. Շինարարական աշխատանքներին այնպիսի անձանց մասնակցության թույլտվության, որոնք չունեն օրենքով սահմանված մակարդակին համապատասխան պահանջվող որակավորում և աշխատանքներ կատարելու համար փաստաթղթով ձևակերպված թույլտվություն:
- 3.4.14. Շինարարական աշխատանքների իրականացման համար այնպիսի մեքենաների, սարքավորումների և շինարարական նյութերի օգտագործման, որոնք չեն համապատասխանում շինարարական նորմերի և կանոնների պահանջներին:
- 3.4.15. Ապահովադրին, նրա ներկայացուցիչներին կամ շինմոնտաժային աշխատանքների իրականացնող այլ կազմակերպության աշխատակիցներին պատճառված մարմնական վնասվածքների, հիվանդության կամ մահվան, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 3.4.16. Նախագծերի, գծագրերի, լուսանկարների, մուշկների, մակետների, արժեթղթերի, կանխիկ դրամի, հաշվապահական և այլ փաստաթղթերի կործանման, վերացման, կորստի, վնասման:
- 3.4.17. Վնասվածքների, որոնք գոյություն ունեն Ապահովագրության պայմանագրի կնքման պահին և հայտնի էին Ապահովադրին, Շահառուին կամ նրանց ներկայացուցիչներին, բայց դրանց մասին չէին հայտնվել Ապահովագրողին:
- 3.4.18. Ահաբեկչության, գերեվարման կամ դիվերսիայի, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 3.4.19. Շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար լիցենզիա կամ նմանատիպ աշխատանքներ իրականացնելու համար թույլատրություն չունեցող անձանց ներգրավման:
- 3.5 Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն՝
- 3.5.1. Ապահովագրողին ներկայացված պահանջները հատուցելու տույժերը (տուգանքները), որոնք հետևանք են շինմոնտաժային աշխատանքների (մատուցված ծառայությունների) անորակ կամ ոչ ժամանակին կատարման, պայմանագրի չկատարման կամ դադարեցման:
- 3.5.2. Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովադրի չստացված շահույթը (բաց թողնված շահույթը):
- 3.5.3. Վնասը, որն առաջացել է ապահովագրական պատահարի հետևանքով, բայց հայտնաբերվել է միայն գնման արդյունքում:
- 3.5.4. Ապահովագրության տարածքին անմիջապես մոտ գտնվող օբյեկտին հասցված վնասը (բացառությամբ Կանոնների 2.1.5 կետում նշված օբյեկտների):
- 3.5.5. Վնասը, որն առաջացել է շինարարական նորմերով և կանոններով չնախատեսված վիբրացիայի (թրթռման) կամ հիմքի հեռացման կամ թուլացման հետևանքով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 3.5.6. Վնասը, որը չի գերազանցում Ապահովագրության պայմանագրում նշված ոչ պայմանական ֆրանչիզայի չափը:
- 3.5.7. Վնասը, որը պայմանավորված է Ապահովադրի կամ նրա ներկայացուցիչների կողմից վնասի կանխարգելմանն ուղղված Ապահովագրողի գրավոր ցուցումների չկատարմամբ:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԸ

- 4.1. Ապահովագրության օբյեկտը համարվում ապահովագրված Ապահովագրության պայմանագրում նշված տարածքում:
- 4.2. Եթե ապահովագրված օբյեկտները տեղափոխվում են ապահովագրության տարածքից, ապա անկախ նրանց այլ վայրում գտնվելու ժամկետներից և/կամ եթե դա տեղի է ունենում դրանց տեղափոխման համար կարգադրություններ տալու իրավունք ունեցող պատասխանատու անձի կողմից կամայականությունների հետևանքով, ապա այդ գույքի նկատմամբ դադարում է Ապահովագրողի կողմից տրամադրվող ապահովագրական ծածկույթի գործողությունը:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

- 5.1 Ապահովագրական գումար է համարվում Ապահովագրության պայմանագրով սահմանված այն դրամական գումարը, որի սահմաններում Ապահովագրողը, ապահովագրական դեպք տեղի ունենալիս պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում և որից ելնելով սահմանվում է ապահովագրավճարի չափը:
- 5.2. Ապահովագրական գումարը սահմանվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, Ապահովադրի դիմումի հիման վրա՝ ապահովագրական օբյեկտի ապահովագրական (իրական) արժեքի սահմաններում:
- 5.3. Ապահովագրական (իրական) արժեքը սահմանվում է՝ ելնելով.
- 5.3.1. Կանոնների 2.1.1 կետով՝ շինարարական աշխատանքների ամբողջական նախագծային (նախահաշվային) արժեքով, ներառյալ նյութերի, աշխատավարձի ծախսերը, փոխադրման ծախսերը, մաքսատուրքերը, հարկերը, ինչպես նաև Պատվիրատուի առաքած նյութերի և շինարարական տարրերի արժեքները:
- 5.3.2. Կանոնների 2.1.2 կետով՝ յուրաքանչյուր մոնտաժման օբյեկտի ամբողջական նախագծային (նախահաշվային) արժեքով, ներառյալ նյութերի, աշխատավարձի ծախսերը, փոխադրման ծախսերը, մաքսատուրքերը, հարկերը, ինչպես նաև Պատվիրատուի առաքած նյութերի և էլեմենտների արժեքները:
- 5.3.3. Կանոնների 2.1.3 և 2.1.4, 2.1.5 կետերով՝ տեխնոլոգիական բնութագրման և նշանակության համանմանությամբ նոր մեքենաների և մեխանիզմների, շինհրապարակի սարքավորումների, շինհրապարակում գտնվող այլ օբյեկտների ձեռք բերման արժեքները, մասհանած այն գումարը, որի չափով մաշվածության հետևանքով տվյալ օբյեկտների արժեքը:
- 5.4. Կանոնների 2.1.6 կետով նախատեսված ապահովագրական գումարը սահմանվում է Կանոնների 2.1.1, 2.1.2, 2.1.4 և 2.1.5 կետերով սահմանված ապահովագրական գումարներից առանձին, որոնք չեն կարող գերազանցել Կանոնների 2.1.1, 2.1.2 կետերով սահմանված ապահովագրական գումարի 2%-ը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 5.5. Կանոնների 2.2.1 կետի համաձայն ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ և հանդիսանում է ապահովագրական հատուցման այն առավելագույն սահմանը, որը կարող է վճարվել ապահովագրության գործողության ժամկետի ընթացքում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների համար: Ապահովագրական գումարի սահմաններում կարող են սահմանվել Ապահովագրողի պատասխանատվության սահմանները հատուցելու ծախսերը Ապահովադրին կամ այն անձին, որի պատասխանատվությունը երրորդ անձանց կյանքին, առողջությանը և գույքին հասցված վնասների համար ապահովագրված է:
- 5.6. Կանոնների 2.2.2 կետի համաձայն ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ՝ բոլոր շինմոնտաժային և թողարկման-կարգավորման աշխատանքների ավարտից հետո շինարարական/մոնտաժային օբյեկտի արժեքի սահմաններում, ներառյալ նյութերի արժեքը, աշխատավարձի ծախսերը, փոխադրման ծախսերը, մաքսատուրքերը, հարկերը՝ դրանց արժեքները հիմնավորող փաստաթղթերի հիման վրա:
- 5.7. Օբյեկտի ապահովագրական (իրական) արժեքից ցածր ապահովագրական գումարի սահմանման դեպքում գործում է մասնակի ապահովագրություն, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 5.7.1. Եթե դա ուղղակիորեն նշված է Ապահովագրության պայմանագրում, ապա ապահովագրության օբյեկտը կարող է ապահովագրվել «առաջին ռիսկի» պայմանով: Այդ դեպքում ապահովագրված գույքի նկատմամբ ապահովագրական հատուցման գումարի որոշման ժամանակ հաշվի չի առնվում ապահովագրական գումարի հարաբերությունը ապահովագրական արժեքին:
- 5.8. Ապահովագրության պայմանագրում Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ սահմանվում է Ապահովագրողի պատասխանատվության սահմանը մեկ ապահովագրական դեպքի և/կամ ապահովագրության գործողության ամբողջ ընթացքի համար և ոչ պայմանական ֆրանշիզան (այսուհետ՝ ֆրանշիզա):
- 5.9. Ապահովագրավճարն որոշվում է Կանոնների 2-րդ մասում նշված յուրաքանչյուր ապահովագրական օբյեկտի համար սահմանված ապահովագրական գումարի և սակագնի հիման վրա:
- 5.10. Ապահովագրության օբյեկտների համար կիրառվող սակագները սահմանվում են բազային սակագների հիման վրա, որոնց նկատմամբ կիրառվում են ապահովագրության հատուկ պայմանները հաշվի առնող կարգավորիչ գործակիցներ:
- 5.11. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից վճարվում է կանխիկ կերպով կամ անկանխիկ հաշվարկների միջոցով՝ Ապահովագրության պայմանագրի պայմաններին համապատասխան:
- 5.12. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից կարող է մուծվել միանվագ կամ մաս-մաս՝ Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում: Ապահովագրավճարի վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվին կամ դրամարկղ դրամական միջոցների մուտքագրման օրը:

6. ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

Ապահովագրության պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար (ֆրանշիզա):

Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով:

Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը պակասեցվում է չհատուցվող գումարի չափով:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Ապահովագրության պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև գրավոր համաձայնագիր է, ըստ որի Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման ժամանակ իրականացնել ապահովագրական հատուցում Ապահովադրին կամ այն անձին, որի օգտին կնքվել է Ապահովագրության պայմանագիրը, իսկ Ապահովադիրը պարտավորվում է Ապահովագրության պայմանագրում սահմանված ժամկետներում կատարել ապահովագրավճարի վճարում: Ապահովագրության պայմանագիրը կարող է բովանդակել նաև Կողմերի համաձայնությամբ սահմանվող և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր գործարքի պայմաններին համապատասխանող այլ պայմաններ:

6.2. Կանոնների հիման վրա Ապահովագրության պայմանագիր կնքելիս սույն պայմանները դառնում են Ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը և պարտադիր՝ Ապահովագրողի և Ապահովադրի համար: Ապահովադիրը կարող է պայմանավորվել Ապահովագրողի հետ Ապահովագրության պայմանագրում Կանոնների առանձին պայմանների բացառման մասին և Ապահովագրության պայմանագրում՝ Կանոններում պարունակվող պայմաններից տարբեր այլ պայմանների լրացման մասին:

6.3. Ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված Կանոնների հիման վրա այն դեպքում, եթե Ապահովագրության պայմանագրում ուղղակիորեն նշում է կատարվում դրանց կիրառման մասին և Կանոնները կցվում են Պայմանագրին: Ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովադրին Կանոնները հանձնելու փաստը հավաստվում է Ապահովագրության պայմանագրում հատուկ գրառմամբ:

6.4. Ապահովագրության պայմանագիր կնքելու համար Ապահովադիրը Ապահովագրողին է ներկայացնում իր կողմից ստորագրված սահմանված կարգի դիմում: Դիմումում Ապահովադիրը պարտավոր է նշել ամբողջական և ճշգրիտ տեղեկություններ ապահովագրական օբյեկտի վերաբերյալ և դիմումի ձևաթղթի ռեկվիզիտների համաձայն՝ այլ անհրաժեշտ տեղեկատվություն: Ապահովադրի կողմից դիմումում նշված ապահովագրության օբյեկտի վերաբերյալ տվյալները ընդունվում են որպես հանգամանքներ, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի աստիճանի գնահատման և ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության որոշման համար:

6.5. Բացի դիմումի ձևով նախատեսված տվյալներից, Ապահովադիրը պարտավոր է տալ նաև Ապահովագրողի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն՝ ապահովագրական ռիսկի աստիճանի գնահատման, ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության և այդ պատահարի հետևանքով հնարավոր վնասների չափերի որոշման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին:

6.6. Եթե Ապահովագրության պայմանագրի կնքումից հետո հաստատվի, որ Ապահովադիրը Ապահովագրողին նախապես հայտնել է Կանոնների 6.4 և 6.5 կետերով նախատեսված կեղծ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրության պայմանագիրը համարել անվավեր և կիրառել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված հետևանքները:

6.7. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով՝ մեկ փաստաթուղթ (պայմանագիր, վկայագիր) կազմելով:

6.8. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի կողմից Ապահովագրության պայմանագրի կամ վկայագրի կորստի դեպքում Ապահովագրողն Ապահովադրին տալիս է կրկնօրինակ: Կրկնօրինակի հանձնումից հետո Ապահովագրության պայմանագրի կամ վկայագրի կորցրած օրինակը համարվում է անվավեր և դրանով վճարումներ չեն կատարվում:

8. ՊԱՎՃՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՍԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

7.1. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար կնքված պայմանագրով (շինարարական կապալառուի պայմանագրով) սահմանված շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակաշրջանի համար, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Եթե շինարարական աշխատանքները ժամանակավոր կդադարեցվեն այնպիսի պատճառներով, որոնք կապված չեն Ապահովադրից կամ անձից, ում օգտին կնքվել է Ապահովագրության պայմանագիրը, (ֆինանսավորման բացակայության, վերապլանավորման, շինարարության համար անհամապատասխան եղանակային պայմանների և այլնի պատճառով), ապա Ապահովագրության պայմանագիրը կարող է երկարաձգվել դրանց դադարեցման ժամկետով, որի համար էլ կնքվում է լրացուցիչ համաձայնագիր: Ապահովագրողը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, չի հատուցում այն վնասը, որն առաջացել է Պայմանագրի գործողությունը դադարեցված լինելու ժամանակահատվածում: Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին գրավոր տեղեկացնել աշխատանքների ժամանակավոր դադարեցման մասին՝ աշխատանքների դադարեցման Ակտի ստորագրման հաջորդ աշխատանքային օրը:

7.2. Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման պահից: Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը տարածվում է Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարների վրա՝ Ապահովադրի կողմից ապահովագրավճարի կամ դրա մի մասի (տարածամկետ վճարման դեպքում) մուտքագրումից հետո՝

- կանխիկ դրամով վճարման դեպքում - Ապահովագրողի ներկայացուցչի կողմից դրամի ստացման օրվան հաջորդող օրվա 00:00 ժամից,

- անկանխիկ հաշվարկների դեպքում - Ապահովագրողի հաշվարկային հաշվին դրամի մուտք լինելու օրվան հաջորդող օրվա 00:00 ժամից, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7.3. Ապահովադրի կողմից Ապահովագրության պայմանագրում սահմանված ժամկետներում և կարգով ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի չվճարման դեպքում Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Ապահովագրության պայմանագիրը՝ Ապահովադրին այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Ապահովագրության պայմանագիրը համարվում է դադարեցված Ապահովագրողի գրավոր ծանուցման մեջ նշված ժամկետի 00:00 ժամից:

7.4. Եթե ապահովագրավճարի տարածամկետ վճարման դեպքում, Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվի կամ կվճարվի Ապահովագրության պայմանագրով նախատեսվածից փոքր չափով, ապա Ապահովագրության պայմանագրով նախատեսված

ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Ապահովագրության պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված ամսաթվին հաջորդող օրվա 00:00 ժամից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 24:00 ժամը:

Եթե հերթական ապահովագրավճարը չի վճարվի ամբողջ ծավալով Ապահովագրության պայմանագրով հերթական ապահովագրավճարի համար որպես վճարման վերջին ամսաթիվ սահմանված ժամկետին հաջորդող 30 օրերի ընթացքում, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Ապահովագրության պայմանագիրը՝ Ապահովադրին այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Ապահովագրության պայմանագիրը համարվում է դադարեցված Ապահովագրողի գրավոր ծանուցման մեջ նշված ժամկետի 00:00 ժամը:

7.5. Կանոնների 7.2. կետի համաձայն ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի վճարման դեպքում ապահովագրությունը սկսում է գործել անմիջապես աշխատանքները սկսելուց կամ շինհրապարակ ապահովագրության օբյեկտների բեռնաթափումից հետո, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7.6. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության գործողությունը դադարում է այն ապահովագրված օբյեկտների կամ դրանց մասերի համար, որոնք ընդունված են կամ բաց են թողնվել շահագործման՝ ավարտված շինարարական օբյեկտի ընդունման կամ հանձնման-ընդունման Ակտի ստորագրման օրվանից, ինչպես նաև այն համապատասխան սարքավորման մասի կամ մեքենայի, եթե այդ սարքավորման մասը կամ մեքենաներից մեկը կամ մի քանի մեքենաներ ենթարկվում են փորձարկման, հանձնվում են շահագործման, որը նույնպես պետք է փաստացի հաստատված լինի, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Ապահովագրողի ներկայացուցիչը կարող է մասնակցել ավարտված շինարարական օբյեկտների շահագործման հանձնման հանձնաժողովի աշխատանքներին:

7.7. Եթե աշխատանքների արագ տեմպերի արդյունքում ապահովագրության ժամկետը ավարտվում է ավելի շուտ, քան նշված էր Ապահովագրության պայմանագրում, ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7.8. Ապահովագրության պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարում է Ապահովագրողի կողմից Ապահովադրի նկատմամբ Ապահովագրության պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում (այդ պարտականությունների կատարման պահից), ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ, Կանոններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

7.9. Ապահովագրության պայմանագրի գործողությունը մինչև դրա գործողության ժամկետի ավարտը դադարում է նաև, եթե ապահովագրության պայմանագրի գործողության մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականությունը վերացել է և ապահովագրական ռիսկի գոյությունը ընդհատվել է ապահովագրական պատահարով չպայմանավորված այլ հանգամանքով (օրինակ, ապահովագրված գույքի կործանումը՝ ապահովագրական պատահարի վրա հասնելուց բացի այլ պատճառով): Այս դեպքում Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի նկատմամբ ապահովագրության գործած ժամանակահատվածին համամասնորեն:

7.10. Ապահովադրի ջանկացած ժամանակ իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվելու Ապահովագրության պայմանագրից, այդ մասին ենթադրվող դադարեցման մասին առնվազն 15 օր առաջ տեղեկացնելով Ապահովագրողին: Ապահովադրի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 70 %-ը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7.11. Ապահովագրողն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Ապահովագրության պայմանագիրը՝ այդ մասին ենթադրվող դադարեցման մասին առնվազն 15 օր առաջ տեղեկացնելով Ապահովադրին: Ապահովագրողի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 70 %-ը:

7.12. Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադրի տվյալ Ապահովագրության պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար (բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է և Ապահովադրի (Ապահովագրված անձը, Շահառուն) համաձայնվել է Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ եզրակացության հետ կամ Ապահովադրի գրավոր հրաժարվել է ապահովագրական հոտուցում ստանալուց) կամ ստացել է ապահովագրական հատուցում:

7.13. Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխությունները կամ լրացումները կատարվում են Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ, կողմերից որևէ մեկի դիմումի հիման վրա, մյուս կողմի՝ դրա ստացման պահից հինգ օրվա ընթացքում:

7.14. Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխությունները կամ լրացումները ուժի մեջ են մտնում Ապահովագրության պայմանագրին կից համաձայնագրի ստորագրման պահից:

9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Ապահովադրին իրավունք ունի՝

8.1.1. ստանալու ապահովագրական հատուցում՝ Ապահովագրության պայմանագրի համաձայն, ապահովագրության կոնկրետ պայմանները հաշվի առնելով, Ապահովագրական գումարի սահմաններում ուղղակի իրական վնասի չափով.

8.1.2. Կանոնների 7.14 կետով նախատեսված կարգով Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխման:

8.1.3. Կանոնների 7.10, 7.11 կետերի համաձայն Ապահովագրության պայմանագրի լուծման:

8.2. Ապահովադիրը պարտավոր է՝

8.2.1. Ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովագրողի պահանջով վերջինիս հայտնել ռիսկայնության աստիճանը որոշող տեղեկություններ,

8.2.2. Հայտնել Ապահովագրողին տվյալ ապահովագրության օբյեկտի նկատմամբ բոլոր կնքված և կնքվող Ապահովագրության պայմանագրերի մասին:

8.2.3. Մուծել ապահովագրավճարները՝ Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում,

8.2.4. Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ նախագուշակյան միջոցառումները, հետևել Ապահովագրողի բոլոր գրավոր ցուցումներին, ինչպես նաև իրավական և նորմատիվ ակտերով սահմանված պահանջներին և նյութերի ու սարքավորումների պատրաստողների կարգադրություններին՝ վճարները կանխելու կամ նվազեցնելու նպատակով:

8.2.5. Անհապաղ Ապահովագրողին գրավոր կերպով հայտնել Ապահովագրության պայմանագրի կնքման պահին հայտնած հանգամանքների փոփոխման մասին, եթե այդ փոփոխությունները կարող են ազդել ռիսկի աստիճանի մեծացման վրա: Մույն պարտավորության պատշաճ կատարման փաստը պետք է հաստատվի գրավոր ապացույցով: Ռիսկի աստիճանի մեծացման վրա ազդող հանգամանքներին են վերաբերվում (բացառությամբ Կանոնների 6.4, 6.5 կետերով նախատեսվածներից)՝

- շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող կազմակերպության (կապալառու, ենթակապալառու) փոփոխումը.
- շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամկետների փոփոխումը.
- օբյեկտի պահպանման պայմանների, ինչպես նաև ապահովագրված գույքի նկատմամբ անվտանգության և պաշտպանության այլ միջոցների փոփոխությունը.
- շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող կազմակերպության լիցենզիայի գործողության կասեցումը,
- նախատեսված նախագծի, ինչպես նաև շինարարական նորմերի և կանոնների համեմատությամբ աշխատանքային տեխնոլոգիաների փոփոխումը.
- վերանախագծումը:

8.2.5.1. Ապահովագրական ռիսկի աստիճանի փոփոխության վրա ազդեցություն ունեցող հանգամանքների մասին հայտնելիս Ապահովագրողը իրավունք ունի պահանջելու Ապահովադիրից Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխություն, լրացուցիչ ապահովագրավճարի վճարում կամ Ապահովագրության պայմանագրի լուծում: Ապահովադիրը հրաժարվելը լրացուցիչ ապահովագրավճար վճարելուց կամ Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխությունից հանդիսանում է Ապահովագրության պայմանագրի լուծման հիմք՝ ռիսկի աստիճանի փոփոխման ամսաթվից: Ապահովագրողը պարտավոր է Ապահովադիրին ուղարկել Ապահովագրության պայմանագրի լուծման մասին գրավոր ծանուցում:

8.2.6. Գրավոր ձևով հայտնել Ապահովագրողին շինմոնտաժային աշխատանքների ժամանակավոր կամ լրիվ դադարեցման մասին՝ այդ մասին պաշտոնական որոշում ընդունելուց (աշխատանքների դադարեցման մասին ակտի ստորագրումից) հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

8.3. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է՝

8.3.1. Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ապահովագրական պատահարների առաջացման հետևանքով վնասները կանխելու կամ նվազեցնելու նպատակով: Այդպիսի միջոցներ ձեռնարկելիս Ապահովադիրը պարտավոր է հետևել Ապահովագրողի ցուցումներին, եթե այդպիսիք նրան տրված են.

8.3.2. Ապահովագրական պատահարի կամ ցանկացած պատահարի, որը կարող է հետագայում հանգեցնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում՝ տեղի ունեցած պատահարի մասին անհապաղ, ցանկացած մատչելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով տեղեկացնել Ապահովագրողին (նրա ներկայացուցչին) Պայմանագրում նշված հեռախոսահամարով, իսկ բոլոր դեպքերում, պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում, չհաշված ոչ աշխատանքային օրերը, այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին: Վեճերի առաջացման դեպքում սույն պարտավորության պատշաճ կատարման փաստը պետք է հաստատված լինի գրավոր ապացույցով (տեղեկանքով և այլն).

8.3.3. Չսպասելով Ապահովագրողի ներկայացուցչի, ոստիկանության աշխատակիցների և այլ իրավասու մարմինների ներկայացուցիչների դեպքի վայր մեկնելուն՝ հավաքել ապահովագրական դեպքի պատճառների և հանգամանքների վերաբերյալ հասանելի լրացուցիչ այլ տեղեկություններ (օրինակ՝ ակնատեսների (վկաների) մասնակցությամբ կամայական ձևի ակտ կազմելու, հնարավորության դեպքում վնասի նկարագիրը լուսանկարի կամ տեսանկարահանման օգնությամբ տալու միջոցով) և փոխանցել Ապահովագրողին:

8.3.4. Պահպանել վնասված օբյեկտը անփոփոխ վիճակում՝ մինչև Ապահովագրողի ներկայացուցիչների գնումը: Ապահովադիրն իրավունք ունի փոխել վնասի պատկերը, եթե դա թելադրված է անվտանգության կանոններով, (նվազեցնելով վնասի չափերը), ինչպես նաև Ապահովագրողին գրավոր հայտնելու պահից 7 օրը լրանալուց հետո.

8.3.5. Ապահովագրական պատահար տեղի ունենալուն հանգեցնող իրադարձությունների մասին հայտնել համապատասխան իրավասու մարմիններին, այդ թվում՝

- ՀՀ Ոստիկանությանը՝ եթե պատահարը հետևանք է երրորդ անձանց ապօրինի գործողությունների, կոտրանքի միջոցով գողության, ավազակության (ապահովագրված գույքի դիտավորյալ ոչնչացում կամ վնասում, հրդեհում և այլն),
- Պետական հրշեջ ծառայությանը՝ եթե պատահարը հետևանք է հրդեհի,
- պետական համապատասխան վթարային ծառայություններին՝ եթե պատահարը հետևանք է ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու կամ ավտոմատ հակահրդեհային համակարգերում պայթյունի կամ վթարի.

8.3.6. Մինչ վերանորոգման կամ վերականգնողական աշխատանքները սկսելը ներկայացնել վնասված օբյեկտը Ապահովագրողի ներկայացուցչին կամ փորձագետին հնարավորություն տալ անցկացնել վնասված ապահովագրված գույքի գնում:

Ապահովագրողին ապահովագրական պատահար տեղի ունենալու մասին տեղեկացրած Ապահովադիրը իրավունք ունի մինչև Ապահովագրողի գնում անցկացնելը կատարել ապահովագրված օբյեկտին պատճառված մասնական վնասվածքների (օբյեկտի ընդհանուր նախահաշվային արժեքի մինչև 5 %-ը) վերանորոգում:

Եթե Ապահովադրի կողմից վնասի պատճառման մասին գրավոր ծանուցում ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողի կողմից փորձաքննություն չի անցկացվում, ապա Ապահովադիրն իրավունք ունի իրականացնել վերանորոգման աշխատանքներ կամ վնասված մասերի փոխարինում:

8.3.7. Ապահովագրական պատահարի փաստի սահմանման և վնասի չափի գնահատման համար ներկայացնել Ապահովագրողին անհրաժեշտ բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերը, ներառյալ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունները:

8.3.8. Երրորդ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով վնասի առաջացման դեպքում հայտնել հետաքննություն անցկացնող համապատասխան իրավասու մարմիններին:

8.3.9. Ապահովագրողին հանձնել բոլոր փաստաթղթերը և ձեռնարկել բոլոր Ապահովագրողին անհրաժեշտ միջոցները՝ իրականացնելու վնասի համար պատասխանատու անձանց նկատմամբ պահանջի իրավունքը (սուբրոգացիա):

8.3.10. Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, Կանոններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ գործողություններ:

8.3.11. Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական հատուցման համար սահմանված կարգի գրավոր դիմում՝ նշելով դիմումի տրման պահին ապահովագրական դեպքի վերաբերյալ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները և ապահովագրական դեպք տեղի ունենալու փաստը հաստատող փաստաթղթերը, այդ թվում ներկայացնել՝

8.3.11.1. Հրդեհի հետևանքով վնասների առաջացման դեպքում, որն առաջացել է ապահովագրված ռիսկերից ցանկացածի հետևանքով՝

- հրդեհի փաստով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին տեղեկանք,
- Պետական հրշեջ ծառայության եզրակացություն:

8.3.11.2. Տարերային աղետների, ինչպես նաև կայծակնահարության հետևանքով վնասների առաջացման դեպքում՝

- տեղեկանք օդերևութաբանական ծառայությունից բնության իրադարձությունների նկարագրությամբ դեպքի տեղի ունենալու (որոնց հետևանք են ապահովագրված գույքի վնասումը և (կամ) կործանումը) վայրի և այդ իրադարձության տեղի ունենալու ամսաթվի վերաբերյալ (փոթորիկի դեպքում տեղեկանքը պետք է պարունակի տվյալներ քամու միջին արագության մասին):

8.3.11.3. Ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և նման համակարգերից, ցայտաջրմուղային և ջրաբաշ համակարգերից ջրի հասցրած վնասների դեպքում՝

- ջրամատակարարման և այլ նմանատիպ ցանցեր շահագործող մասնագիտացված ծառայությունների կողմից տրված ակտ, որը բնութագրում է տվյալ համակարգերի շարքից դուրս գալու պատճառները և մեղավոր կողմին,
- տեղեկանք բնակչահագործման վարչության (կամ այլ նման կազմակերպության) կողմից այն դեպքում, եթե շենքը բնակելի է և հանձնված է շահագործման,

8.3.11.4. Պայթյունի հետևանքով վնասների դեպքում՝

- Լեռայետտեխսկողությունից կամ ուժային ագրեգատների (գազատար ցանցերի) պայմանների նկատմամբ հսկողություն իրականացնող այլ պետական ծառայություններից տեղեկանքներ կամ ակտեր վնասի պատճառների մասին՝ նշելով տեխնիկական դեֆեկտները, շահագործման նորմաների խախտման մեջ մեղավոր անձանց,

8.3.11.5 Կոտրելու միջոցով կողոպուտի, գողության, ավազակության ժամանակ կամ երրորդ անձանց կանխամտածված գործողությունների ժամանակ՝

- տեղի ունեցածի մասին ներքին գործերի մարմիններ ներկայացված Ապահովադրի դիմումի պատճենը՝ պահանջով անցկացնել հետաքննություն կամ հարուցել քրեական գործ.
- քրեական գործի հարուցման (կամ դրա հարուցումը մերժելու) մասին որոշման պատճենը.
- ապահովագրված շինությունների և այլ գույքի կողմնակի կազմակերպության ուժերով պահպանություն իրականացնելու դեպքում՝ պահպանություն իրականացնող ընկերության կամ արտագերատեսչական պահպանություն իրականացնողների հետ կնքված պայմանագրի պատճենը.
- պահպանության ազդանշանային համակարգի առկայության դեպքում՝ ազդանշանային համակարգի աշխատելու վերաբերյալ փաստաթղթերը, վտանգի ազդանշանը պահպանող ձեռնարկության վահանակի վրա ստացման կամ արտագերատեսչական պահպանության և օպերատիվ խմբի մեկնումը հաստատող փաստաթղթերը,

8.3.11.6. Մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակ թույլ տրված սխալների շինարարական/մոնտաժային օբյեկտի փլուզման կամ վնասման հետևանքով առաջացած վնասների դեպքում՝

- Պետշինհսկողության եզրակացությունը.
- շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակ փլուզման կամ սխալի փաստով անկախ փորձաքննության եզրակացությունը ,

8.3.12. Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել կրած վնասների գումարների չափը հաստատող և հիմնավորող փաստաթղթեր, որոնց հիման վրա կկատարվի ապահովագրական հատուցման գումարի հաշվարկը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից: Այդպիսի փաստաթղթերի թվին են պատկանում՝

- վնասված, ոչնչացված կամ կորած գույքի ցուցակը,
- ապահովագրական պատահարի վրա հասնելու պահին վնասված, ոչնչացված և (կամ) կորած գույքի արժեքը հաստատող փաստաթղթերը,
- գույքի գույքագրման ակտերը, որոնք կազմված են գույքի վնասման (ոչնչացման) փաստի վերաբերյալ՝ ապահովագրական պատահարը վրա հասնելու ամսաթվին մոտ ամսաթվով՝
- կատարված աշխատանքների և ծախսերի մասին տեղեկանք,
- վերանորոգման (վերականգնողական) աշխատանքների կատարման նախահաշիվը (հաշվարկը),
- այլ փաստաթղթեր, որոնց հիման վրա կարելի է գաղափար կազմել Ապահովադրի կրած վնասների մեծության վերաբերյալ:

8.3.13. Ապահովադրի կողմից գույքի վնասման կամ կործանման վերաբերյալ Ապահովագրողին ներկայացված դիմումին ընթացք տալու գործընթացը սկսելու համար Ապահովադիրը պարտավոր է հաստատել ապահովագրված գույքի պահպանման համար իր նյութական շահագրգռվածությունը (համաձայն օրենքի, այլ իրավական ակտերի կամ Ապահովագրության պայմանագրի): Դրա համար Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել այդ գույքի սեփականության, տիրապետման, օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերը:

8.4. Ապահովագրական հատուցում վճարելու դիմումը հավելվածներով (8.3.11.-8.3.13. կետեր) ստանալու փաստը պետք է հաստատվի Ապահովագրողի կողմից լիազորված անձի տրված ստացականով կամ նամակի ուղարկման փաստը հավաստող փոստային ծանուցմամբ:

8.5. Ապահովագրողն իրավունք ունի՝

8.5.1. Ստուգել ապահովագրված օբյեկտի վիճակի մասին Ապահովադրի ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը իրական հանգամանքներին, ինչպես նաև Ապահովադրի կողմից շինարարական նորմերի, տեխնիկական անվտանգության կանոնների և Ապահովագրության պայմանագրի պայմանների և Ապահովագրողի գրավոր ցուցումների կատարումը:

8.5.2. Մասնակցել ապահովագրված գույքի փրկման և պահպանման աշխատանքներին, տալ Ապահովադրի համար պարտադիր գրավոր ցուցումներ՝ ուղղված վնասի նվազեցմանը:

8.5.3. Ինքնուրույն պարզել ապահովագրական պատահարի պատճառները և հանգամանքները:

8.5.4. Չննել վնասված գույքը՝ չսպասելով Ապահովադրի կողմից վնասի ծանուցմանը: Ապահովադիրն իրավունք չունի դրանում խոչընդոտել Ապահովագրողին:

8.5.5. Ապահովագրական պատահարի փաստի սահմանման և վնասի չափի գնահատման համար պահանջել Ապահովադրից ներկայացնել անհրաժեշտ բոլոր տեղեկությունները՝ ներառյալ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունները:

8.5.6. Ապահովագրական պատահարի փաստի սահմանման և պատճառված վնասի չափի գնահատման համար պահանջել ներկայացնել Ապահովագրողին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, եթե կոնկրետ հանգամանքները հաշվի առնելով այդպիսի փաստաթղթերի բացակայությունը անհնարին է դարձնում Ապահովագրական պատահարի փաստի սահմանումը և ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի չափի գնահատումը: Այդ դեպքում ապահովագրական հատուցման վճարման ժամկետը սկսում է հաշվարկվել Ապահովադրի պահանջած վերջին փաստաթղթի ներկայացման օրվանից: Դատարանում վեճ առաջանալու դեպքում ապահովագրական դեպքի հետաքննության համար պահանջվող փաստաթղթի անհրաժեշտության ապացուցման պարտականությունը դրված է Ապահովագրողի վրա:

8.5.7. Հարցադրումներ կատարել համապատասխան իրավասու մարմիններին՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը և պատճառները հաստատող համապատասխան տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու նպատակով:

8.5.8. Ապահովագրված գույքի վնասման կամ կործանման դեպքում երկարաձգել ապահովագրական հատուցման վճարման ժամկետը, եթե՝

8.5.8.1. Ապահովադրի նախաձեռնությամբ նշանակված է լրացուցիչ փորձաքննություն՝ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասների չափը ճշտելու նպատակով: Այդ դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Կանոնների 8.6.4.2 կետում նշված ժամկետներում՝ հաշված Ապահովագրողի՝ լրացուցիչ փորձաքննության անցկացման արդյունքները պարունակող փոստաթղթերի ստացման օրվանից:

8.5.8.2. Ապահովադրի աշխատակիցների կամ նրա ներկայացուցիչների նկատմամբ ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստով հարուցվել է քրեական գործ: Այդ դեպքում Ապահովագրողը Կանոնների 8.6.4.2. կետում նշված ժամկետներում, սկսած քրեական հետաքննության ավարտման ամսաթվից, որոշում է կայացնում ապահովագրական հատուցման վճարման կամ հատուցման մերժման մասին:

8.5.8.3. Կան հիմնավորված կասկածներ Ապահովադրի ապահովագրական հատուցումը ստանալու իրավասության վերաբերյալ: Այդ դեպքում ապահովագրական հատուցումը չի վճարվում այնքան ժամանակ, մինչև կներկայացվեն անհրաժեշտ ապացույցներ (Կանոնների 8.3.13 կետում նշված փաստաթղթերը):

8.6. Ապահովագրողը պարտավոր է՝

8.6.1. Ապահովադրին ծանոթացնել ապահովագրության պայմաններին (Կանոններին),

8.6.2. Ապահովադրի կողմից ռիսկի աստիճանի փոփոխման մասին տեղեկությունը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում ուսումնասիրել և գրավոր հայտնել Ապահովադրին Ապահովագրության պայմանների, լրացուցիչ ապահովագրավճարի վճարման կամ Ապահովագրության պայմանագրի դադարեցման մասին (Կանոնների 8.5.5. կետ):

8.6.3. Չիրապարակել Ապահովադրի մասին, նրա գույքային դրության մասին տեղեկություններ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

8.6.4. Ապահովադրի կողմից վնասի մասին գրավոր ծանուցում ստանալուց հետո (Կանոնների 8.3.2. կետ)՝

8.6.4.1. Ապահովադրի մասնակցությամբ ապահովագրական պատահարի մասին ծանուցում ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել ապահովագրության օբյեկտի զննում և կազմել զննման ակտ:

8.6.4.2. Ուսումնասիրել Ապահովադրից ստացված փաստաթղթերը և Կանոնների 8.3.11-8.3.13 կետերում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում, ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու (մերժման դեպքում նշելով դրա պատճառները) մասին եզրակացություն (որոշում): Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովադրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովադրի (Շահառուի) հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է Ապահովադրին (Շահառուին): Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության (գրանցման) հասցեով: Անհրաժեշտության դեպքում՝ իրադարձությունը ապահովագրական պատահար ճանաչելու մասին որոշման ընդունման և վնասի չափի գնահատման համար կատարվում է փորձաքննություն:

8.6.5. Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 30 օրվա ընթացքում միանվագ իրականացնել ապահովագրական հատուցում, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել: Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվից դրամական միջոցների դուրս գրման օրը:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9.1. Ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովադիրին (Շահառուին) Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի և տվյալ դեպքի համար սահմանված պատասխանատվության սահմաններում՝ մասհանած Ապահովագրության պայմանագրով սահմանված ոչ պայմանական ֆրանչիզան՝ Ապահովադիրի՝ վնասի հատուցման մասին գրավոր դիմումի և ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառված վնասի չափերը հավաստող փաստաթղթերի հիման վրա:

9.2. Ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովագրված օբյեկտներին (այսուհետ՝ գույքին) պատճառված վնասի չափը չգերազանցող չափով:

9.3. Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա վնասի չափը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ փորձաքննության անցկացման և վնասված/կործանված օբյեկտների վերականգնման նախահաշվի կազմման միջոցով: Փորձաքննությունը իրականացվում է Ապահովագրողի հաշվին:

9.4. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջելու անկախ փորձաքննության անցկացում, որը վճարվում է դրա անցկացումը պահանջող կողմի հաշվին:

9.4.1. Անկախ փորձաքննության անցկացման համար վճարման ծախսերը, որից հետո տեղի ունեցած պատահարը ճանաչվում է ոչ ապահովագրական, վճարվում է Ապահովադիրի կողմից: Անկախ փորձագետներ չեն կարող լինել անձինք, որոնք հանդիսանում են Ապահովադիրի մրցակիցներ կամ նրանց հետ գործնական հարաբերությունների մեջ են, ինչպես նաև Ապահովագրողի և Ապահովադիրի աշխատակիցներ:

9.4.2. Եթե անկախ փորձագետի կողմից սահմանված հատուցման գումարը ստացվում է ավելի պակաս, քան Ապահովագրողի կողմից առաջարկված հատուցման գումարն է, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է անկախ փորձագետի սահմանված գումարի չափով: Այս դեպքում անկախ փորձաքննության անցկացման համար կատարված ծախսերը հատուցում է Ապահովադիրը:

9.4.3. Եթե անկախ փորձաքննության արդյունքում կպարզվի, որ Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման մերժումը անհիմն է եղել կամ ապահովագրական հատուցման գումարը անհիմն նվազեցվել է, ապա Ապահովագրողը հատուցում է Ապահովադիրին անկախ փորձաքննության անցկացման ծախսերը:

9.4.4. Ապահովագրողն իրավունք ունի նաև ինքնուրույն կերպով՝ իր համապատասխան ստորաբաժանման կամ աշխատակցի միջոցով գնահատելու պատահարի հետևանքով պատճառված վնասի չափը և դա հիմք ընդունելու ապահովագրական հատուցման չափի որոշման համար:

9.5. Վնասի չափը որոշվում է՝

9.5.1. Ապահովագրված գույքի լրիվ կործանման (ոչնչացման) դեպքում ապահովագրական հատուցումը չափը հաշվարկվում է ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին գույքի իրական արժեքի չափով՝ հանելով այն մնացորդների արժեքը, որոնք կարող են վաճառվել կամ օգտագործվել գործնական նպատակներով:

Լրիվ կործանում ասելով հասկացվում է ապահովագրված գույքի վերականգնման տեխնիկական անհնարինության կամ դրա այնպիսի վիճակը, երբ վերականգնման համար անհրաժեշտ ծախսերը գերազանցում են ապահովագրական պատահարը վրա հասնելու պահին դրա իրական գինը, այսինքն վերականգնումը հանդիսանում է տնտեսապես ոչ նպատակահարմար:

9.5.2. Ապահովագրված գույքին պատճառված վնասի դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկվում է դրա վերականգնման ծախսերի գումարի չափով, բայց ոչ ավել, քան Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափը, իսկ տվյալ պատահարի կամ գույքի համար առանձին պատասխանատվության չափ նախատեսված լինելու դեպքում՝ տվյալ պատասխանատվության չափը:

Վերականգնողական ծախսերն իրենց մեջ ներառում են՝

- վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի գնման ծախսերը,
- վերանորոգման վայր նյութերի տեղափոխման ծախսերը,
- վերանորոգման աշխատանքների վճարման ծախսերը՝ բացառությամբ արտաժամյա, գիշերային ժամերին և

պաշտոնական տոնական օրերին աշխատանքի համար աշխատավարձի հավելումները, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Ընդ որում լրացուցիչ ծախսերը, որոնք կախված են աշխատանքների շտապ լինելու, շինարարական նյութերի տեղափոխման միջոցի փոփոխության, կատարելագործման կամ ապահովագրված օբյեկտի նախագծի փոփոխման, ժամանակավոր կամ պրոֆիլակտիկ վերանորոգման հետ, չեն ներառվում ապահովագրական հատուցման գումարի մեջ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.5.2.1. Գույքի վերականգնողական ծախսերը հաշվարկվում են մասհանելով վերականգնման (վերանորոգման) գործընթացում փոխարինվող նյութերի և պահեստամասերի մաշվածության արժեքը: Եթե իրականացվում է վնասված մասերի փոփոխում, չնայած որ հնարավոր էր դրանց վերանորոգումը առանց ապահովագրված գույքի շահագործման անվտանգությանը վտանգ սպառնալու, ապա Ապահովագրողը հատուցում է Ապահովադիրին այդ պահեստամասերի վերանորոգման արժեքը, բայց ոչ ավել, քան դրանց փոխարինման արժեքը:

9.5.3. Ապահովագրված գույքի գողության, հափշտակության դեպքում՝ ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին դրա ապահովագրական (իրական) արժեքի չափով, բայց ոչ ավել, քան Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը, իսկ տվյալ պատահարի կամ գույքի համար առանձին պատասխանատվության չափ նախատեսված լինելու դեպքում՝ տվյալ պատասխանատվության չափը:

9.6. Ապահովագրողը հատուցում է նաև այն խելամիտ և նպատակաուղղված ծախսերը, որոնք Ապահովադիրը կատարել է Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա վնասների նվազեցման (փրկման ծախսերը) նպատակով, եթե այդպիսի ծախսերի կատարումը անհրաժեշտ էին կամ կատարվել էին Ապահովագրողի ցուցումով:

Այդ ծախսերը հատուցվում են, եթե դրանք անհրաժեշտ էին կամ կատարվել էին Ապահովագրողի ցուցումները կատարելու համար, եթե նույնիսկ ձեռնարկված միջոցները ապարդյուն էին:

9.7. Գույքի վերականգնման ծախսերի մեջ չեն ներառվում`

9.7.1. Ծախսերը, որոնք կապված են ապահովագրված գույքի փոփոխման կամ բարելավման հետ:

9.7.2. Ծախսերը, որոնք կապված են ժամանակավոր (օժանդակող) վերանորոգման կամ վերականգնման հետ, եթե այդ վերանորոգումը չի հանդիսանում ամբողջական վերանորոգման մի մասը, կամ եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.7.3. Սարքավորումների վերահավաքման, պրոֆիլակտիկ վերանորոգման և սպասարկման հետ կապված ծախսերը:

9.8. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը ցածր է Ապահովագրության պայմանագրի կնքման պահին ապահովագրված գույքի ապահովագրական (իրական) արժեքից, ապա ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողն Ապահովադիրին (Շահառուին) վճարում է ապահովագրական հատուցում ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված փաստացի վնասի մի մասի չափով` ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի համամասնությամբ` դրանից մասհանելով Ապահովագրության պայմանագրով նախատեսված ոչ պայմանական չհատուցվող գումարը: Մույն դրույթը տարածվում է ինչպես ապահովագրության օբյեկտի, այնպես էլ առանձին դրա յուրաքանչյուր մասի վրա:

9.9. Ապահովագրողը չի հատուցում`

9.9.1. Ապահովագրության պայմանագրում նշված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով վնասը.

9.9.2. Ցանկացած բնույթի անուղղակի վնասը, ներառյալ տույժը (տուգանքը), Ապահովադիրի մոտ առաջացած վնասը, որը հետևանք է շինմոտաժային աշխատանքների իրականացման համար կնքված պայմանագրի պայմանների խախտման կամ այդ պայմանագրի դադարեցման.

9.9.3. Վնասը, որը հետևանք է սխալ նախագծման, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

9.9.4. Վնասը, որը չնայած առաջացել է ապահովագրական դեպքի արդյունքում, բայց հայտնաբերվել է գույքագրման ընթացքում: Գույքագրում ասելով հասկացվում է հաշվապահական հաշվեկշռի տվյալների համաձայն` կազմակերպության գույքի թվաքանակի ստուգումը.

9.9.5. Վնասը, որը պատճառվել է ապահովագրական ծածկույթը ընդգրկող տարածքին անմիջապես մոտ գտնվող առարկաներից, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

9.9.6. Վնասը, որն առաջացել է թերություններ (դեֆեկտներ) ունեցող նյութերի կամ կոնստրուկցիաների փոխարինման, վերանորոգման կամ հեռացման (վերացման) արդյունքում, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Բայց եթե թերություն (դեֆեկտ) ունեցող նյութերի օգտագործման արդյունքում տուժել են ապահովագրված գույքի սարքին վիճակում գտնվող այլ մասերը, ապա դրանց վերականգնման ծախսերը ենթակա են հատուցման.

9.9.7. Վնասը, որն առաջացել է`

- մաշվածության, կորոզիայի, թթվեցման, ինչպես նաև սովորական եղանակային պայմանների ազդեցության (ներգործության) հետևանքով.
- շինարարական գտնվող սարքավորումների շահագործման գործընթացում ծագած կամ դրանց անսարքության արդյունքում առաջացած մեքենաների և/կամ էլեկտրական սարքավորումների ներքին անսարքությունների հետևանքով.
- ընդհանուր օգտագործման ճանապարհների տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ դրանց կործանման, կորստի կամ վնասման.
- տեխնիկական, շինարարական, հաշվապահական և այլ փաստաթղթերի, դրամի, արժեթղթերի կամ չեկերի, փաթեթավորման նյութերի, այդ թվում կոնտեյներների, արկղերի, տակառների և այլնի վնասման կամ կործանման:

9.10. Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվելու ապահովագրական հատուցում վճարելուց, եթե Ապահովադիրը կամ նրա ներկայացուցիչը`

9.10.1. Միտումնավոր կատարել է կամ թույլ է տվել այնպիսի գործողություն (անգործություն), որը հանգեցրել է վնասի առաջացման.

9.10.2. Ապահովագրական պատահար տեղի ունենալուց հետո խոչընդոտել է Ապահովադիրի կամ նրա ներկայացուցչի կողմից ապահովագրված գույքի գնմանը, ապահովագրական պատահարի առաջացման հանգամանքների հայտնաբերմանը, վնասի բնույթի և չափի որոշմանը.

9.10.3. Չի կատարել կամ խախտել է Կանոնների 8.2. և 8.3. կետերով սահմանված պահանջները.

9.10.4. Պատճառված վնասի համար պատասխանատու անձի կողմից ստացել է հատուցում: Եթե Ապահովադիրը պատճառված վնասի համար պատասխանատու անձի կողմից ստացել է հատուցում, ապա Ապահովագրողը ապահովագրական հատուցում հաշվարկելիս որպես վնաս ընդունում է միայն Ապահովագրության պայմանագրի համաձայն հատուցման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացված գումարի տարբերության չափը: Այդպիսի գումարներ ստանալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է դրանց մասին անմիջապես տեղյակ պահել Ապահովագրողին.

9.10.5. Ապահովագրության պայմանագրով և օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

9.11. Եթե Ապահովադիրն են վերադարձվել նրանից գողացված (հափշտակված) ապահովագրված գույքը, ապա վերջինս պարտավոր է 10 օրվա ընթացքում Ապահովագրողին վերադարձնել վճարված ապահովագրական հատուցումը` մասհանած գույքի գողության հետևանքով առաջացած անհրաժեշտ ու դրա վերականգնման (վերանորոգման) աշխատանքների համար կատարված ծախսերը:

9.12. Եթե Ապահովադիրը տվյալ օբյեկտի նկատմամբ կնքել է Ապահովագրության պայմանագրեր մի քանի Ապահովագրողների հետ դրա ապահովագրական (իրական) արժեքը գերազանցող ընդհանուր ապահովագրական գումարով, ապա ապահովագրական պատահար տեղի ունենալիս Ապահովադիրն կամ այն անձին, ում օգտին կնքված է

ապահովագրության պայմանագիրը վճարվում է վնասի նկատմամբ այն համամասնությամբ, ինչ համամասնություն է կազմում տվյալ ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը բոլոր ապահովագրության պայմանագրերով սահմանված ապահովագրական գումարների հանրագումարին:

9.13. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել վճարված ապահովագրական հատուցումը (կամ դրա համապատասխան մասը), եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետի ընթացքում հայտաբերվի այնպիսի հանգամանք, որը ամբողջովին կամ մասնակի գրկում է Ապահովադիրին ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից:

9.14. Ապահովագրողն ազատվում է այն լրացուցիչ ծախսերի հատուցումից, որոնք առաջացել են Ապահովադիրի հնարավոր կորուստները նվազեցնելու խելամիտ և հասանելի միջոցները դիտավորյալ չկիրառելու արդյունքում:

9.15. Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Կանոնների 8.2 8.3. կետերում նշված կարգով և (կամ) ժամկետներում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:

9.16. Ապահովագրական հատուցում վճարելուց հետո Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազում է Ապահովադիրին (Շահառուին) վճարված հատուցման չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելու պահից: Ապահովագրական հատուցում ստանալուց հետո Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարը՝ Ապահովագրության պայմանագրին կից համաձայնագիր տալու միջոցով:

11. ՍՈՒՔՐՈՎԱՑԻԱ

10.1. Ապահովագրական հատուցումը վճարած Ապահովագրողին են անցնում Ապահովադիրի վնասների համար վճարված գումարի (ապահովագրական հատուցման) սահմաններում պահանջի իրավունքը, որն Ապահովադիրը (անձը, ում օգտին կնքված է ապահովագրության պայմանագիրը) ունի վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ:

10.2. Ապահովագրողին անցած պահանջի իրավունքը իրականացվում է Ապահովադիրի և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

10.3. Ապահովադիրը (անձը, ում օգտին կնքված է ապահովագրության պայմանագիրը) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը, ապացույցները և հայտնել Ապահովագրողին վերջինիս անցած պահանջի իրավունքներն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր տվյալները:

10.4. Եթե Ապահովադիրը (անձը, ում օգտին կնքված է ապահովագրության պայմանագիրը) հրաժարվել է Ապահովագրողին հասցված վնասների համար պատասխանատու անձից իր պահանջի իրավունքներից, կամ այդ իրավունքի իրականացումը անհնարին է դարձել Ապահովադիրի (անձի, ում օգտին կնքված է ապահովագրության պայմանագիրը) մեղքով, Ապահովագրողն ամբողջությամբ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջել վերադարձնել հատուցման ավել վճարված գումարը:

12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒՃՍԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, վեճերը լուծվում են դատական կարգով՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

11.2. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

ՇԻՆՄՈՆ-ՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՍԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՐՐՈՐԴ ԱՆՉԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՂԱԲԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ԼՐԱՑՈՒՄ ԿԱՆՈՆՆԵՐԻ 2.2.1. ԿԵՏԻՆ)

1. Շինմոնտաժային աշխատանքների ապահովագրության Կանոնների և սույն Լրացուցիչ պայմանների հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով կարող է ապահովագրվել Ապահովադրի կամ շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող այլ անձի (այսուհետև՝ անձ, ում պատասխանատվությունը ապահովագրված է) երրորդ անձանց (Շահառուների) կյանքին, առողջությանը և/կամ գույքին՝ շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում, և եթե դա նախատեսված է Ապահովագրության պայմանագրով, նաև թողարկումից հետո երաշխիքային պարտավորությունների կատարման ժամանակ պատճառված վնասի հետևանքով պատասխանատվության առաջացման ռիսկը:

Երրորդ անձանց նկատմամբ քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությունը իրականացվում է միայն Ապահովագրողի հետ շինմոնտաժային աշխատանքների Ապահովագրության կնքված պայմանագրի շրջանակներում, համաձայն որի ապահովագրության օբյեկտներից մեկն է հանդիսանում Ապահովադրի կամ շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար պատասխանատու այլ անձի գույքային շահերը, կապված շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելու համար օբյեկտ և/կամ միջոց հանդիսացող և շինհրապարակում կամ նրան անմիջապես հարող մոտ տարածքում գտնվող գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման հետ:

1.1. Անձը, որի պատասխանատվության ռիսկը վնասի պատճառման համար ապահովագրված է, պետք է նշվի Ապահովագրության պայմանագրում: Եթե այդ անձը նշված չէ Ապահովագրության պայմանագրում, համարվում է որ ապահովագրված է հենց Ապահովադրի պատասխանատվության ռիսկը:

1.2. Սույն Լրացուցիչ պայմանների համաձայն՝

Ապահովագրության օբյեկտ են համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է, գույքային շահերը՝ կապված Ապահովագրության պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների ընթացքում երրորդ անձանց գույքին, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հետ և թողարկումից հետո երաշխիքային պարտավորությունների կատարման ժամանակ պատճառված վնասի հատուցման հետ, եթե նման ապահովագրություն նախատեսված է Ապահովագրության պայմանագրով,

1.2.1. Ապահովադրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) կողմից պատճառված վնաս ասելով հասկացվում է ֆիզիկական անձանց կյանքին և առողջությանը հասցված վնասը, ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց պատկանող գույքի կործանումը կամ վնասումը, որի համար պատասխանատվությունը ՀՀ օրենսդրության համաձայն կրում է Ապահովադիրը (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է):

1.2.2. Երրորդ անձ ասելով սույն Կանոններ համաձայն հասկացվում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատճառված վնասի հատուցման պահանջի ներկայացման իրավունք ունի Ապահովադրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) նկատմամբ:

1.2.3. Վնասի հատուցման պահանջներ ասելով հասկացվում է Ապահովադրին (անձին, ում պատասխանատվությունը ապահովագրված է) հասցեագրված տուժած անձանց գրավոր պահանջները (այդ թվում հայցի ձևով), ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ հիմնավորված պատճառված վնասի չափի և դրա առաջացման պատճառների ապացույցներով՝ հայցային պահանջով դատարան դիմելը:

2. Սույն Լրացուցիչ պայմաններին համապատասխան ապահովագրական պատահար են համարվում անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է, Կանոնների հիման վրա ապահովագրված՝ շինարարական աշխատանքների ընթացքում և ապահովագրության տարածքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասները հատուցելու պարտականության ի հայտ գալը:

Մեկ պատահարի հետևանքով մի քանի անձանց հասցված վնասը համարվում է մեկ ապահովագրական պատահար:

3. Ապահովագրողը սույն Լրացուցիչ պայմաններին համապատասխան իր վրա է վերցնում ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունը, երրորդ անձանց և նրանց գույքին հասցված վնասների չափով և որի համար պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է), եթե՝

- շինմոնտաժային աշխատանքների, թողարկման և թողարկումից հետո երաշխիքային աշխատանքների իրականացման ժամանակ այդ անձի պատասխանատվությունը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ.
- պատճառված վնասը ուղիղ պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում շինմոնտաժային աշխատանքների, թողարկման և ետթողարկման երաշխիքային աշխատանքների իրականացման հետ.
- վնասը պատճառվել է շինմոնտաժային աշխատանքների, թողարկման և ետթողարկման երաշխիքային աշխատանքների իրականացման ժամանակ.
- երրորդ անձանց հասցված վնասի պատճառ է հանդիսանում այն իրադարձությունը, որը տեղի է ունեցել Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրության տարածքում, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4. Ապահովագրողը նաև հատուցում է ապահովագրական պատահար տեղի ունենալու հետևանքով երրորդ անձանց հասցված վնասի հատուցման հետ կապված դատական ծախսերը, եթե սույն Լրացուցիչ պայմանների համաձայն պատճառված վնասը ենթակա է հատուցման:

5. Բացի Շինմոնտաժային աշխատանքների ապահովագրության Կանոնների 3.4, 3.5 կետերում նշված բացառություններից, Ապահովագրողը չի հատուցում՝

5.1. Վնասը, որը պատճառվել է երրորդ անձանց Կանոնների և ետթողարկման երաշխիքային պարտավորությունների ապահովագրության Լրացուցիչ պայմանների հիման վրա ապահովագրված (կամ որը կարող էր լինել ապահովագրված) գույքին:

5.2. Ապահովադրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) գույքին հասցված վնասը, որը նրան է պատկանում սեփականության իրավունքով կամ օրենքով կամ պայմանագրով սահմանված կարգով գտնվում է նրա տրամադրության տակ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5.3. Որևէ ավտոտրանսպորտային միջոցի կողմից պատճառված վնասը, եթե դրանք նախատեսված չեն բացառապես ապահովագրության օբյեկտի տեղակայման (գտնվելու վայրի) սահմաններում օգտագործման համար, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6. Ապահովագրական պատահար չի համարվում և Ապահովագրողի կողմից բավարարման ենթակա չեն հետևյալ պահանջները՝

6.1. Ապահովադրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) հետ աշխատանքային կամ քաղաքացիա-իրավական (համաձայն կապալի կամ ենթակապալի պայմանագրի) հարաբերությունների մեջ գտնվող անձանց գույքին, կյանքին և առողջությանը հասցրած վնասները, նրանց կողմից աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված, հասցված վնասների պահանջները, ինչպես նաև նրանց պահանջները՝ կապված աշխատանքից հեռացման, գործազրկության թոշակի, անաշխատունակության, մարմնական վնասվածքների, հիվանդության կամ մահվան հետ կապված վճարների հատուցման հետ.

6.2. Վնասի հատուցումը, որի պատճառման համար պատասխանատվությունը Ապահովադրի (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է) իր վրա է վերցրել որևէ պայմանագրով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի պատասխանատվությունը ի հայտ է գալիս քաղաքացիական օրենսդրության նորմերին համապատասխան և նման պայմանագրի բացակայության դեպքում.

6.3. Գործող օրենսդրությամբ նախատեսված հատուցման գումարից ավել վնասի հատուցման պահանջը.

6.4. Ապահովադրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) լիցենզիայի գործողության կասեցման, դադարեցման, ետ կանչման կամ չեղյալ հայտարարման ընթացքում պատճառված վնասների հատուցման պահանջը.

6.5. Տուժած անձանց բաց թողնված շահույթով պայմանավորված վնասի հատուցման պահանջը.

6.6. Ֆիզիկական անձանց պատճառված բարոյական վնասի կամ իրավաբանական անձանց գործարար համբավին պատճառված վնասի դրամական հատուցման պահանջը.

7. Ապահովադրի (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է) պարտավոր է՝

7.1. Անհապաղ, կապի բոլոր մատչելի միջոցները օգտագործելով, տեղեկացնել Ապահովագրողին պատահարի հետ կապված նրան ներկայացված բոլոր գույքային բնույթի պահանջների մասին և երեք օրվա ընթացքում այդ փաստը գրավոր հաստատել.

7.1.1. Այդպիսի պահանջներ ստանալուց հետո Ապահովադրի (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է) պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի մինչև Ապահովագրողի կողմից գործի քննումը տուժած անձը դատարան չդիմի, մասնավորապես գրավոր տեղեկացնել նաև տուժած անձին Ապահովագրության պայմանագրի առկայության մասին և ներկայացնել Ապահովագրողի տվյալները.

7.1.2. Տուժած անձի կողմից ներկայացված վնասի պահանջի քննարկման ընթացքում Ապահովագրողի ցուցումների համաձայն գրավոր հարցումներ կատարել դիմողին՝ ապահովագրական պատահարը հետաքննելու համար անհրաժեշտ փոստաթղթեր ներկայացնելու համար, և ձեռնարկել այնպիսի միջոցներ, որպեսզի ապահովվի Ապահովագրողի մասնակցությունը ապահովագրական պատճառների և հանգամանքների հետաքննման գործընթացին.

7.2. Հայտնել Ապահովագրողին տուժած անձի կողմից դատարան հայտ ներկայացնելու մասին նախքան դատարանի կողմից գործի նյութերի քննությունը և համապատասխան որոշման կայացումը՝ չնայած Ապահովադրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) կողմից ձեռնարկված փորձերին պայմանավորվածության միջոցով կարգավորելու ներկայացված պահանջները: Այդ դեպքում անհրաժեշտ է, որպեսզի Ապահովադրի (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է) լիազորի Ապահովագրողի կողմից լիազորված անձին՝ ներկայացնելու Ապահովադրին (պատասխանողին) դատական գործընթացներում՝ բոլոր անհրաժեշտ ընթացակարգային իրավասություններով, այդ թվում, հայցի ճանաչման իրավունքով.

7.3. Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական հատուցման վճարման գրավոր դիմում՝ նշելով դիմումի տրման ամսաթիվին իրեն հայտնի ապահովագրական պատահարի հանգամանքների մասին և ներկայացնել փաստաթղթեր, որոնք հաստատում են ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը և վնասի չափը, որոնց թվին են պատկանում՝

7.3.1. փաստաթղթեր, որոնք վերաբերվում են ապահովագրական պատահարի հանգամանքներին, պատճառներին և պատճառված վնասի չափին (այդպիսիք կարող են լինել պետական և գերատեսչական հանձնաժողովների եզրակացությունները, գույքի գնման ակտերը և այլ փաստաթղթեր),

7.3.2. վնասը հատուցելու մասին երրորդ անձանց պահանջները, որոնք նրանց պատճառել է անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է,

7.3.3. տուժած անձանց տվյալները, ինչպես նաև նրանց բանկային (փոստային) ռեկվիզիտները,

7.3.4. դատարանի որոշումը,

7.3.5. Ապահովագրողի կողմից պահանջվող ցանկացած այլ փաստաթղթեր:

7.4. Գրավոր տեղեկացնել Ապահովագրողին շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում քաղաքացիական պատասխանատվության Ապահովագրության բոլոր պայմանագրերի մասին՝ նշելով ապահովագրական ընկերությունների անվանումները, ապահովագրական ռիսկերը և ապահովագրական գումարների չափերը:

8. Ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովադրին Ապահովագրության պայմանագրի պայմաններին համապատասխան՝ վնասի հատուցման գրավոր դիմումի, ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը, վնասի չափը հավաստող փաստաթղթերի և դեպքի վերաբերյալ Ապահովագրողի եզրակացության հիման վրա:

8.1. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել նրա կողմից պահանջվող բոլոր այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը և վնասի չափը որոշելու համար:

8.2. Ապահովադիրը պարտավոր է ուսումնասիրել Ապահովադիրից ստացված բոլոր փաստաթղթերը և վերջին պահանջվող փաստաթուղթը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում ընդունել որոշում պատահարը ապահովագրական ճանաչելու մասին կամ Ապահովադիրի հասցեով ուղարկել ապահովագրական հատուցման վճարման մերժման մասին պատճառաբանված որոշում:

8.3. Պատահարը ապահովագրական ճանաչելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է 30 օրվա ընթացքում միանվագ իրականացնել ապահովագրական հատուցում, եթե Ապահովադիրը (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է) և Ապահովագրողը ապահովագրական հատուցման վճարման այլ ժամկետ չեն համաձայնեցրել: Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվից դրամական միջոցների դուրս գրման օրը:

9. Ապահովագրական հատուցման գումարը ներառում է՝

9.1. Պատճառված վնասի հատուցման ծախսերը՝ դատարանի որոշման կամ Ապահովագրողի, Ապահովադիրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) և վնասը կրած անձի միջև փոխադարձ համաձայնության համապատասխան չհ գործող օրենսդրությամբ սահմանված չափով:

9.2. Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ կատարված ծախսերը՝ ապահովագրական պատահարի հանգամանքների և պատճառների նախնական պարզաբանման նպատակով, ինչպես նաև Ապահովադիրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) կողմից պատճառված վնասի հետ կապված մեղավորության առկայությունը ճշտելու և հաստատելու համար:

9.3. Դատական մարմիններում ապահովագրական պատահարի առընչությամբ գործավարման ծախսերը՝ եթե գործը դատարան ներկայացվել Ապահովագրողի համաձայնությամբ, կամ Ապահովադիրը (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է) չէր կարող խուսափել գործը դատարան հանձնելուց:

Ապահովադիրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) ծախսերը համաձայն 9.2 և 9.3. կետերի փոխհատուցվում են Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի և տվյալ ապահովագրական պատահարի գծով պատասխանատվության չափի սահմաններում: Եթե պահանջի գումարը գերազանցում է Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը, ապա նշված ծախսերը հատուցվում են ընդհանուր պահանջի գումարի նկատմամբ սույն պարբերությունով սահմանված ապահովագրական գումարի համամասնությամբ:

9.4. Ապահովագրողը հատուցում է նաև այն խելամիտ և նպատակաուղղված ծախսերը, որոնք Ապահովադիրը (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է) կատարել է Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա վնասների նվազեցման (փրկման ծախսերը) նպատակով, եթե այդպիսի ծախսերի կատարումը անհրաժեշտ էին կամ կատարվել էին Ապահովագրողի ցուցումով:

10. Եթե գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Ապահովադիրը (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է) պարտավոր է պատճառված վնասի համար վճարել ամսեկան կարգով կամ այլ պարբերաբար (կանոնավոր) մուծումներով, ապա Ապահովագրողը իրավունք ունի գործող օրենսդրության դրույթներին համապատասխան իրականացնել միանվագ հատուցման գումարի հաշվարկ:

11. Եթե Ապահովադիրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) կողմից պատճառված վնասը ենթակա է հատուցման նաև վնաս հասցնելու համար պատասխանատու այլ անձանց կողմից, ապա Ապահովագրողը հատուցում է միայն դեպքի հետևանքով հատուցման ենթակա լրիվ գումարի և այդ անձանցից գանձման ենթակա գումարի տարբերությունը: Ապահովադիրը (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է) պարտավոր է տեղեկացնել Ապահովագրողին այդպիսի անձանց գոյության և նրանցից գանձման ենթակա հատուցման գումարների չափերի մասին:

12. Ապահովագրական հատուցման վճարման պահանջի իրավունքը երրորդ անձանց համար չհ գործող օրենսդրությանը համապատասխան պահպանվում է հայցային վաղեմության ժամկետի ընթացքում:

13. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու օրը պատճառված վնասի համար Ապահովադիրի պատասխանատվությունը ապահովագրված է նաև այլ ապահովագրական ընկերություններում, ապա Ապահովագրողը ապահովագրական հատուցում վճարում է այն չափով, որքանով որ Ապահովագրական պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը համամասնական է Ապահովադիրի կողմից կնքված բոլոր Ապահովագրության պայմանագրերով սահմանված ընդհանուր ապահովագրական գումարների հանրագումարին:

14. Ապահովագրության պայմանագրում կողմերի համաձայնությամբ սահմանվում է մեկ ապահովագրական դեպքով կամ ապահովագրության պայմանագրի ամբողջ գործողության ժամկետում շինմոտաժային աշխատանքների իրականացման ընթացքում երրորդ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի համար պատասխանատվության ընդհանուր սահման և նյութական վնասը հատուցելու ժամանակ ոչ պայմանական ֆրանշիզա՝

15. Ապահովագրության պայմանագիրը գործում է դրանում նշված ժամկետների շրջանակներում: Սակայն շինմոտաժային և թողարկման-կարգավորիչ աշխատանքների իրականացման ընթացքում քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության ժամանակ Ապահովագրողի պատասխանատվությունը ուժի մեջ է մտնում ոչ շուտ, քան շինարարական նյութերը և սարքավորումները շինարարական մուտք գործելը և ավարտվում է ոչ ուշ, քան օբյեկտը շահագործման հանձնելու պահը:

Թողարկումից հետո երաշխիքային պարտավորությունների ապահովագրության ժամանակ Ապահովագրողի պատասխանատվությունը ուժի մեջ է մտնում ետթողարկման երաշխիքների գործողությունը ուժի մեջ մտնելու պահից և ավարտվում է երաշխիքային ժամկետը լրանալուց հետո:

16. Ապահովադիրը (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է) առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության իրավունք չունի երրորդ անձանց վնասի հատուցման պահանջը կարգավորելու համար ընդունելու որևէ ուղղակի կամ անուղղակի պարտավորություններ:

17. Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադիրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) անունից վարել բանակցություններ և պատճառված վնասի հատուցման համար երրորդ անձանց պահանջները կարգավորելու համար կնքել համաձայնագրեր, ինչպես նաև դրանց հետ կապված գործերը վարել դատական մարմիններում:

18. Ապահովադիրը (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է) պարտավոր է Ապահովագրողին տալ համապատասխան լիազորագիր և ցուցաբերել նրան անհրաժեշտ օգնություն:

Ապահովադիրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) կողմից սույն դրույթի խախտումը Ապահովագրողին իրավունք է տալիս մերժելու ապահովագրական հատուցման վճարումը:

19. Ապահովագրական հատուցում վճարելուց հետո շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում քաղաքացիական պատասխանատվության ապահովագրական գումարը, վճարման օրվանից սկսված, նվազում է վճարված հատուցման չափով:

Հավելված 2

ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՍՏՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ

ԹՈՂԱՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

**ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ
(ԼՐԱՑՈՒՄ ԿԱՆՈՆՆԵՐԻ 2.2.2. ԿԵՏԻՆ)**

1. Շինմոնտաժային աշխատանքների ապահովագրության Կանոնների և սույն Լրացուցիչ պայմանների հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով կարող է ապահովագրվել Ապահովադիրի (անձի, ում պատասխանատվությունը ապահովագրված է) մոտ լրացուցիչ ծախսերի առաջացման ռիսկը, որոնք պայմանավորված են նրա կողմից կառուցված շենքին (շինությանը) կամ տեղադրված սարքավորմանը հասցված վնասի հատուցման պարտավորության հետ, որը հետևանք է շինմոնտաժային, թողարկման-կարգավորման աշխատանքների և թողարկումից հետո (կամ ետթողարկման) երաշխիքային պարտավորությունների կատարման ընթացքում թույլ տրված թերությունների, պայմանով, որ դրանք ի հայտ են եկել ետթողարկման պարտավորությունների երաշխիքային ժամկետի ընթացքում:

Ետթողարկման երաշխիքային պարտավորությունների ապահովագրությունը իրականացվում է միայն Ապահովագրողի հետ կնքված շինմոնտաժային աշխատանքների Ապահովագրության պայմանագրի շրջանակներում, որի ապահովագրության օբյեկտներից մեկն է հանդիսանում Ապահովադիրի կամ շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար պատասխանատու այլ անձի գույքային շահերը՝ կապված շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելու համար օբյեկտ և/կամ միջոց հանդիսացող և շինհրապարակում կամ նրան անմիջապես մոտ (հարող) տարածքում գտնվող գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման հետ:

2. Սույն Լրացուցիչ պայմանների համապատասխան ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադիրի գույքային շահերը, որոնք կապված են Ապահովադիրի մոտ լրացուցիչ ծախսերի առաջացման հետ, որոնք պայմանավորված են նրա կողմից կառուցված շենքին (շինությանը) կամ տեղադրված սարքավորմանը հասցված վնասի հատուցման պարտավորության հետ, որը հետևանք է շինմոնտաժային, թողարկման-կարգավորման աշխատանքների և ետթողարկման երաշխիքային աշխատանքների կատարման ընթացքում թույլ տրված թերությունների, պայմանով, որ դրանք ի հայտ են եկել ետթողարկման երաշխիքային պարտավորությունների ժամանակահատվածում:

3. Ապահովագրական պատահար են համարվում Ապահովադիրի մոտ սույն Լրացուցիչ պայմանների 2-րդ կետում նշված լրացուցիչ ծախսերի առաջացումը՝, պայմանով, որ գործող նորմատիվների և կանոններին համապատասխան ապահովված են կառուցված/ վերանորոգված օբյեկտների մատակարարումը անհրաժեշտ հումքով և նյութերով:

4. Ապահովագրական պատահարների չեն համարվում (ի լրումն Շինմոնտաժային աշխատանքների ապահովագրության կանոնների 3.4., 3.5. կետերում նշվածներից)՝

- լրացուցիչ ծախսերը, որոնք առաջացել են հեղուկ վառելիքային ռիսկերի, սառեցնող հեղուկների և այլ օժանդակող նյութերի, ապահովագրված առարկաներով արտադրվող կամ մշակվող արտադրանքի կործանման կամ վնասման արդյունքում,

- լրացուցիչ ծախսերը, որոնք կապված են Ապահովադիրի կողմից օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների թերությունների վերացման, որը հանդիսանում է կամ կարող է պատճառ հանդիսանալ ապահովագրական պատահար տեղի ունենալու, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

- լրացուցիչ ծախսերը, որոնք հետևանք են ցանկացած անուղղակի վնասի, մասնավորապես, ակնկալվող շահույթի կորստի կամ ենթակապալային աշխատանքների կատարման ընթացքում նշանակված տուգանքների:

5. Եթե Ապահովագրության պայմանագրով սահմանված է մեկ ապահովագրական դեպքի համար Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն չափ, ապա միևնույն ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված բոլոր վնասների համար ապահովագրական հատուցումը, ներառյալ վնասի նվազեցման և կանխման նպատակով կատարված ծախսերը, չի կարող գերազանցել այդ սահմանը:

6. Ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը ի հայտ է գալիս Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետներում, Ապահովադիրի կողմից ետթողարկման երաշխիքային պարտավորությունները իր վրա ստանձնելու ամսաթվից, պայմանով, որ ապահովագրավճարը կվճարվի Ապահովագրության պայմանագրի պահանջներին համապատասխան:

7. Ապահովադիրը պարտավոր է անհապաղ, իրեն մատչելի ցանկացած միջոց օգտագործելով, տեղեկացնել Ապահովագրողին պատահարի մասին, որը սույն Լրացուցիչ պայմաններին համապատասխան կարող է համարվել ապահովագրական պատահար՝ 3 օրվա ընթացքում այդ փաստը գրավոր հավաստելով:

8. Ապահովադիրին ապահովագրական հատուցում վճարվում է Ապահովագրության պայմանագրի պայմաններին համապատասխան՝ վնասի հատուցման համար գրավոր դիմումի, ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը վնասի չափը հաստատող փոստաթղթերի և ապահովագրական ակտի հիման վրա:

8.1.1. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել նրա կողմից պահանջվող այն բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը և վնասի չափը որոշելու համար:

8.1.2. Ապահովադիրը պարտավոր է ուսումնասիրել Ապահովադիրից ստացված բոլոր փաստաթղթերը և վերջին պահանջվող փաստաթուղթը ստանալուց հետո տաս օրվա ընթացքում ընդունել որոշում պատահարը ապահովագրական ճանաչելու մասին կամ Ապահովադիրի հասցեով ուղարկել ապահովագրական հատուցման վճարման մերժման մասին պարզաբանված որոշում:

8.1.3. Պատահարը ապահովագրական ճանաչելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է 30 օրվա ընթացքում միանվագ իրականացնել ապահովագրական հատուցում, եթե Ապահովադիրը (անձը, ում պատասխանատվությունը ապահովագրված է) և Ապահովագրողը ապահովագրական հատուցման վճարման այլ ժամկետ չեն համաձայնեցրել: Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվից դրամական միջոցների դուրս գրման օրը:

9. Վնասի չափը որոշվում է՝

9.1. Կառուցված/վերանորոգված օբյեկտի կործանման դեպքում՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին դրա իրական արժեքի չափով՝ մասհանած հետագա օգտագործման համար պիտանի առկա մնացորդների արժեքը:

9.2. Կառուցված/վերանորոգված օբյեկտի վնասման դեպքում գույքի ապահովագրական պատահարից անմիջապես առաջ առկա վիճակը վերականգնելու համար կատարված ծախսերը, այդ թվում՝

9.2.1. վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի և նյութերի գնման ծախսերը,

9.2.2. վերանորոգման վայր պահեստամասերի և նյութերի տեղափոխման ծախսերը,

9.2.3. վերանորոգման աշխատանքների վճարման ծախսերը:

9.2.4. այլ ծախսերը, բայց միայն այն դեպքում, եթե դա անմիջապես նշված է Ապահովագրության պայմանագրում:

Ընդ որում, վերականգնողական ծախսերը պետք է նվազեցվեն ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին վնասված գույքի մաշվածության չափով:

10. Ապահովագրական հատուցում վճարելուց հետո ետթողարկման երաշխիքային պարտավորությունների ապահովագրության ապահովագրական գումարը, վճարման օրվանից սկսած, նվազում է վճարված հատուցման չափով: